# Քրիստոնյա Հայաստան

2023, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (643)

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ*


## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*Դեկտեմբերի 4-ին* **ԱՄՆ հայոց արևմտյան թեմի պատվիրակությանը**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արևմտյան թեմի պատվիրակությանը՝ ի դեմս Վաշինգտոնի նահանգի Սիեթլի Սուրբ Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վազգեն քհն. Բոյաջյանի, Սան Ֆրանցիսկոյի Սուրբ Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ քհն. Աշի և թեմական խորհրդի ատենապետ տիար Վարդան Նազիրյանի:

Տեր Վազգենը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, տեղեկացրեց, որ պատվիրակությունը Հայաստան է ժամանել տեղում ծանոթանալու արցախահայերի առջև ծառացած մարտահրավերներին, նրանց սոցիալական կացությանը և կարիքների գնահատման արդյունքում մշակելու աջակցության ծրագրեր:

Իր սերն ու օրհնությունը փոխանցելով պատվիրակության անդամներին՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ԱՄՆ հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանին՝ Արցախից բռնի տեղահանված հայորդիների աջակցությանն ուղղված ջանքերի համար: Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ հայրենազրկված արցախահայության ծանր կացությանը և հյուրերին ներկայացրեց Մայր Աթոռի՝ արցախցի հայորդիներին աջակցելու ծրագրերը՝ կարևորելով նաև սփյուռքահայության հետևողական մասնակցությունն այդ գործում:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց պատվիրակության անդամների հարցերին, որոնք առնչվում էին արցախահայերի ծանր կացությանը և իրականացվող աջակցության ծրագրերի ընդլայնմանը:

**Եվրախորհրդարանի պատգամավորին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդարանի պատգամավոր Ժոֆրուա Դիդիեին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Օլիվյե Դըկոտինյիի:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց պատգամավոր Ժոֆրուա Դիդիեին՝ հայանպաստ դիրքորոշման համար, ինչպես նաև Եվրախորհրդարանին՝ ի պաշտպանություն արցախահայության արդար իրավունքների կատարված հայտարարությունների և որդեգրված բանաձևերի առնչությամբ:

Իր խոսքում Նորին Սրբությունն անդրադարձավ Ադրբեջանի ցեղասպանական գործողություններին, որոնց հետևանքով հայաթափվեց Արցախը, ինչպես նաև Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքների բռնազավթմանը և որդեգրած ագրեսիվ քաղաքականությանը:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց մինչ օրս Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների վերադարձման և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին՝ այդ ուղղությամբ կարևորելով միջազգային ատյանների գործուն քայլերի ձեռնարկումը:

Եվրախորհրդարանի պատգամավոր Ժոֆրուա Դիդիեն Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ Հայաստան իր այցի ընթացքում ի մոտո ծանոթացել է հայրենազրկված արցախահայության ծանր կացությանը: Այս առիթով Եվրախորհրդարանի պատգամավորը հավաստիացրեց, որ այսուհետ ևս պիտի շարունակի ջանքեր ներդնել ի նպաստ արցախահայերի իրավունքների պաշտպանության և Հայաստանի անվտանգային խնդիրների հաղթահարման:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև Երուսաղեմի Հայոց պատրիարքության «Կովերի պարտեզ» կալվածքի վարձակալության շուրջ ստեղծված իրադարձություններին: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանին՝ խնդրի առնչությամբ կատարած կոչի համար:

*Դեկտեմբերի 8-ին* **ՀՀ-ում Կանադայի նորանշանակ դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Կանադայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Էնդրյու Թըրներին:

Նորին Սրբությունը շնորհավորեց դեսպանին և հաջողություններ մաղթեց նրան իր առաքելության մեջ՝ նշելով, որ Հայաստանում Կանադայի դեսպանության հիմնումը կնպաստի երկու երկրների բարեկամական հարաբերությունների առավել սերտացմանն ու արգասավորմանը:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Հայրապետը, ի դեմս դեսպանի, իր գնահատանքը հայտնեց Կանադայի իշխանություններին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման, ինչպես և մեր երկրին ու ժողովրդին ցուցաբերած զորակցության համար:

Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց Հայաստանի առջև ծառացած անվտանգային, Արցախից տեղահանված հայորդիների արդար իրավունքների պաշտպանության, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրներին՝ հույս հայտնելով, որ միջազգային հանրության և բարեկամ երկրների գործուն աջակցությամբ մեր ժողովուրդը կկարողանա դուրս գալ ստեղծված ծանր կացությունից:

Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ նաև Կանադայի իշխանությունների՝ հայ համայնքի հանդեպ դրսևորվող հոգատար վերաբերմունքին՝ նկատելով, որ Կանադայի հայ համայնքը կարևոր կամուրջ է երկու երկրների միջև հարաբերությունների զորացման համար:

Նորանշանակ դեսպան Էնդրյու Թըրները, խոսելով Հայաստանում իր առաքելության և հայ-կանադական համագործակցության խորացման ու զարգացման հեռանկարների մասին, պատրաստակամություն հայտնեց ամեն ջանք ներդնելու՝ ի նպաստ Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման, բռնի տեղահանված արցախահայության զորակցության և տարածաշրջանում խաղաղության հաստատման:

## Տեղի ունեցավ «Շուշին՝ Կովկասի մարգարիտ» գիտաժողովը

Դեկտեմբերի 11–12-ին Ֆրանսիայի «Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտում» (INALCO) տեղի ունեցավ «Շուշին՝ Կովկասի մարգարիտ» խորագրով երկօրյա գիտաժողովը, որը կազմակերպվել էր «Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտ» (INALCO) հիմնադրամի և «Հիշատակարան» նախագծի նախաձեռնությամբ:

Գիտաժողովի բացմանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական կենտրոնի տնօրեն Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը ներկաներին փոխանցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու գնահատանքը:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկավ Ֆրանսիայի Սենատի փոխնախագահ Պիեր Ուզուլիասը:

Գիտաժողովին ներկա էին Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր վրդ. Խաչատրյանը, Ֆրանսիայում ՀՀ դեսպան տիկին Հասմիկ Տոլմաջյանը, Ֆրանսիայի մշակութային ժառանգության ազգային ինստիտուտի տնօրեն Շարլ Պերսոնազը, հայ և օտարերկրացի գիտնականներ, քաղաքական, հասարակական և մշակութային գործիչներ:

Գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին զեկույցներ՝ նվիրված Շուշիի և առհասարակ Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին, և ուղեղշվեցին այդ ուղղությամբ հայ ու ֆրանսիացի գործիչների համագործակցության ճանապարհները:

Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը բանախոսեց «Շուշին որպես կրթական և հոգևոր կենտրոն Արցախի թեմում և Սուրբ Էջմիածնի առաքելությունն Արցախի մշակութային ժառանգության պահպանման գործում» թեմայով, ինչպես նաև ներկայացրեց Ադրբեջանի՝

հայոց սրբավայրերի թիրախավորման և պատմամշակութային արժեքների ոչնչացման փաստագրված ապացույցներ ու միջազգային հանրության՝ ձեռնարկվելիք քայլերի առաջարկներ:

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նշվեց հայոց առաջին լուսավորիչների տոնը

Դեկտեմբերի 2-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հիշատակեց հայոց առաջին լուսավորիչներ Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների տոնը:

Դեռևս 2015 թվականին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով տոնը հռչակվել է Աստվածամուխ սուրբ գեղարդի ուխտի օր: Այդ օրը հավատացյալների օրհնության և երկրպագության համար դուրս է բերվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահվող համաքրիստոնեական սրբությունը:

Շնորհառատ օրվա կապակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագիչն էր ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Տ. Մովսես վրդ. Սարգսյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին թեմական առաջնորդներ, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, միաբաններ և բազմաթիվ ուխտավորներ:

Սուրբ պատարագի ընթացքում եկեղեցական թափորի առաջնորդությամբ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մատուռ-մկրտարան բերեց աստվածամուխ սուրբ գեղարդը՝ օրհնելով ուխտավոր հայորդիներին:

Իր քարոզում հայր սուրբը, անդրադարձ կատարելով տոնի խորհրդին, ի մասնավորի նշեց. «Սիրելի՛ հավատացյալներ, պատմության ընթացքում, երբ որ հայ ազգը շեղվել է առաքյալների քարոզած հավատքից, հեռացել է նրանց հիմնած Առաքելական Սուրբ Եկեղեցուց ու դադարել է լսել իր հոգևոր առաջնորդներին, ընկել է փորձությունների մեջ: Երբեմն որոշ շրջանակներ տարածում են այն թեզը, թե հայ ազգը թուլացավ, երբ քրիստոնյա դարձավ: Սակայն իրականում ճիշտ հակառակն է. հայ ազգը թուլացավ, կորուստներ ունեցավ ոչ թե քրիստոնյա լինելու պատճառով, այլ քրիստոնյա չլինելու պատճառով: Մեր ազգի դժբախտությունների պատճառ եղել են Մայր Եկեղեցուց հեռանալը և առաքյալների քարոզած մաքուր հավատի ու քրիստոնեության պակասը:

Սուրբ Գրքում հստակորեն ասվում է, որ եթե Աստծու տված օրենքները չպահեք, ապա բոլոր ազգերից վերջինը կլինեք, դուք կցանեք, ուրիշները կուտեն, պատերազմների մեջ կընկնեք, ձեր զավակները գերի կլինեն, կսփռվեք աշխարհով մեկ (տե՛ս Ղևտ. ԻԶ 14–33), իսկ եթե Աստծու պատվիրանները պահեք, ապա պիտի հաջողեք ու հզորանաք, դուք հալածական կանեք ձեր թշնամիներին, և Տերը ձեր երկրին խաղաղություն կպարգևի (տե՛ս Ղևտ. ԻԶ 3–8)»:

Հայր Մովսեսն ընդգծեց նաև, որ առաքյալների տոնը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նկատմամբ մեր սերն ու հավատարմությունը վերահաստատելու և մեր հայրերի ու վարդապետների թողած ժառանգությանն ու բարոյական արժեքներին հավատարիմ մնալու ուխտի օր է:

Վերջում հայր սուրբը հորդորեց հավատացյալներին աղոթքով հայցել Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների բարեխոսությունը հայ ազգի համար, որպեսզի Աստված առաքելական հավատքի մեջ զորացնի ու պահպանի մեր ժողովրդին, և աստվածամուխ սուրբ գեղարդը շարունակի հրաշագործել հայոց կյանքում՝ ի պայծառություն Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի շինություն հայրենիքի:

Սուրբ պատարագի ավարտին Հայոց Հայրապետը Պահպանիչ աղոթքով և սուրբ գեղարդով օրհնեց ներկա ժողովրդին, ապա հավատացյալներին հնարավորություն ընձեռվեց երկրպագելու ու համբուրելու համաքրիստոնեական սրբությունը:

Աստվածամուխ սուրբ գեղարդը Մայր Աթոռի մարտուռ-մկրտարանում մնաց մինչև երեկոյան ժամերգության ավարտը:

## Ի Տեր հանգավ Տ. Տարոն եպս. Ճերեճյանը

Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդարանից Մայր Աթոռ Ս. Էջմիածնին տեղեկացվել է, որ դեկտեմբերի 5-ին՝ կյանքի 86-րդ տարում, երկարատև ծանր հիվանդությունից հետո վախճանվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Տ. Տարոն եպս. Ճերեճյանը: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մայր Աթոռի միաբանությունը խորապես սգում են բազմավաստակ Տարոն սրբազանի մահը՝ աղոթելով երջանկահիշատակ սրբազան հոր հոգու հանգստության և խաղաղության համար:

Տ. Տարոն եպս. Ճերեճյանի վերջին օծման և թաղման կարգը կատարվեց դեկտեմբերի 9-ին Մարսելի Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցում՝ ձեռամբ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև եպս. Հակոբյանի: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ դեկտեմբերի 10-ին Սուրբ Գայանե վանքում և թեմերի առաջնորդանիստ եկեղեցիներում հավարտ սուրբ պատարագի կատարվեց երջանկահիշատակ Տարոն եպիսկոպոսի հոգեհանգստյան կարգը:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

### Կենսագրություն

Տ. Տարոն եպս. Ճերեճյանը (ավազանի անունը՝ Ժիրայր) ծնվել է 1937 թ. հուլիսի 11-ին Բեյրութում: Նախնական կրթությունն ստացել է Սահակյան վարժարանում: 1952 թ. ընդունվել է Մեծի Տանն Կիլիկիո դպրեվանք: 1957 թ. ձեռնադրվել է սարկավագ: 1959 թ. ավարտել է Մայր Աթոռի Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանը: 1960–1963 թթ. ուսանել է Անգլիայում, նախ՝ Քելիամի Սուրբ Առաքելություն, ապա՝ Լոնդոնի Թագավորական քոլեջում: 1963 թ., ձեռամբ հոգելույս Տ. Սերովբե արք. Մանուկյանի, ձեռնադրվել է աբեղա: 1964 թ. նշանակվել է վալանսահայության հոգևոր հովիվ: 1965 թ. ապրիլի 23-ին, պաշտպանելով վարդապետական թեզ՝ «Յոթ Խորհուրդները Հայոց Եկեղեցու» թեմայով, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ստացել է վարդապետական մասնավոր աստիճան: 1965 թ. վերադարձել է Ֆրանսիա և ծառայության կոչվել Մարսելում: Այնուհետև երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի կարգադրությամբ մեկնել է Դամասկոս՝ որպես առաջնորդական տեղապահ: 1972 թ. նշանակվել է Նիսի շրջակայքի հոգևոր հովիվ: 1978 թ., ձեռամբ Տ. Շահե արք. Աճեմյանի, ստացել է ծայրագույն վարդապետության աստիճան՝ ներկայացնելով իր «80 քարոզներ» աշխատանքը: 1991 թ. ընտրվել է Մարսելի առաջնորդական փոխանորդ և հայրապետական պատվիրակի փոխանորդ: 1992 թ. ստացել է եպիսկոպոսական օծում՝ ձեռամբ երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի: 2003 թ. օգոստոսին, ձեռնադրության 40 ամյակի առթիվ, Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի կողմից արժանացել է Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանին: 2003 թ., իր իսկ ցանկությամբ, սրբազան հայրն անցել է վաստակած հանգստի:

## Նոր նշանակում և կարգալուծություն

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ սույն թվականի դեկտեմբերի 1-ից քահանայական կարգի մեջ վերականգնվել է Հայկ Գազազյանը՝ որպես Տ. Նորայր քհն. Գազազյան և ծառայության կոչվել ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմում:

Հայրապետական տնօրինությամբ և իր դիմումի համաձայն՝ կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռի միաբան Տ. Աղան աբղ. Երնջակյանը: Կարգալույծ հոգևորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Լևոն Երնջակյան ավազանի անունով:

## Կկազմակերպվի բանախոսությունների շարք՝ «Պատարագն Աստվածաշնչի էջերից մինչև այսօր» խորագրով

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը կներկայացնի բանախոսությունների շարք՝ «Պատարագն Աստվածաշնչի էջերից մինչև այսօր» խորագրով:

Բանախոսությունները տեղի կունենան Արմավիրի թեմի Վաղարշապատի Ս. Աստվածածին եկեղեցում 2023 թ. դեկտեմբերի 14-ին, 21-ին, 2024 թ. հունվարի 11-ին, 18-ին և 25-ին: Հինգշաբաթյա բանախոսությունների ընթացքում կներկայացվեն Ս. Պատարագի խորհուրդը, մեղքի, Քրիստոսի զոհաբերության, Մեսիայի և փրկության աստվածաշնչյան ընկալումները: Անդրադարձ կկատարվի հինկտակարանյան զոհաբերությանը՝ որպես մեղքերի քավության միջոց, ինչպես նաև Ս. Պատարագի սկզբնավորմանը և Ս. Հաղորդության խորհրդի հաստատմանը՝ ըստ Նոր Կտակարանի:

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իրականացնում է դրամական աջակցության ծրագիր

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ և օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սոցիալական ծառայության գրասենյակն իրականացնում է դրամական աջակցության ծրագիր 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված 4 և ավելի անչափահաս երեխա ունեցող, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակություն հաստատած արցախցի ընտանիքների համար:

**Լրատվական նյութերը՝**
**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի**
**տեղեկատվական համակարգի**

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# Մարդասիրությունն աստվածատուր շնորհ է

Թարգմանչաց տոնին՝ հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը, ավանդույթի համաձայն, «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնի նախագահության նիստ գումարեցինք՝ տարին ամփոփելու և նոր անելիքները որոշելու օրակարգով: Սակայն Թարգմանչաց տոնը նշելու, միմյանց շնորհավորելու ամենամյա լուսավոր տրամադրությանը կսկիծ էր խառնվել՝ Արցախին պատուհասած անպատմելի աղետի պատճառով: Հայոց Արցախ աշխարհը հայաթափվել է, պետական այրեր ու զինվորներ են գերեվարվել, պատանդառվել էր նաև աստվածատուր մարդասեր ու բարերար Ռուբեն Վարդանյանը, որի գործունեությունը պատշաճ կարևորել ու լուսաբանել էինք «Մաշտոց» հանդեսի էջերում (Գիրք 67, Գիրք 80):

Հայոց հայրենիքում տիրող իրավիճակի քննարկման ավարտին «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնի նախագահության ավագը՝ Վանդոս Ղարագյոզյանը, առաջարկեց ադրբեջանական կալանավայրում պատանդառված, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահեղինակ, պատվարժան հայորդի Ռուբեն Վարդանյանին բարոյապես աջակցելու նպատակով արժանացնել մեր կազմակերպության «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջին» մեդալի:

Առաջարկությունը դրվեց քվեարկության, ընդունվեց միաձայն և ծափահարություններով...

* * *



Այսօրվա իրականությունը, տարատեսակ կազմակերպությունների և անհատների նախաձեռնությունների ու ցնորական գաղափարների առատությունը ձևախեղել են հանրային հարաբերությունները: Այդ նախաձեռնություններն ու ծրագրերը մեծամասամբ միտված են դրանք հղացողների անձնական պատվախնդրությունները կամ այլ ակնկալիքները բավարարելուն: Համաշխարհայնացումը, բռնությամբ ժողովրդավարություն հաստատելու չհաջողված փորձերը, մեկի իրավունքը ոտնահարելով՝ մյուսի իրավունքների պաշտպանությունը միջազգային հարթակներում թեժ քննարկվող և հանրությանն ապակողմնորոշող անպտուղ գործընթաց են: Աշխարհում տիրող խառնաշփոթը խթանողները մի նպատակ են հետապնդում՝ վերացնել ազգային պետությունները և տիրանալ նրանց պաշարներին և ունեցած միջոցներին:

Աստվածամերժ մեր ժամանակներում՝ մարդկության դեմ կատարված ամենադաժան ոճրագործության՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, արժանապատիվ հայորդիներ Ռուբեն Վարդանյանը, Նուբար Աֆեյանը և Վարդան Գրեգորյանը համայն մարդկությանն ընծայեցին «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը՝ սահմանելով նաև «Ավրորա» մրցանակը: Նախաձեռնությունն ու մրցանակն անվանվել են Արշալույս Մարտիկյանի անունով, որը Հայոց ցեղասպանության ականատես է, փրկվելով մահից ու ստրկությունից՝ ընտրել է Ավրորա Մարդիգանյան անուն-ազգանունը և գրել Հայոց ցեղասպանության վերաբերյալ «Հոշոտված Հայաստան» գիրքը՝ իր վերապրած մղձավանջային իրադարձությունների մասին: Հռոմեական դիցարանի արշալույսի աստվածուհի Ավրորան ևս եղել է մրցանակի անվան ներշնչանքի աղբյուր:

Դարերի խորքից եկող բազմաչարչար, տաղանդաշատ, մշակութարար հայ ժողովրդին պատիվ բերող «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը համամարդկային եզակի բարեսեր ու աննախադեպ ազգային առաքելություն է՝ ցեղասպանություն վերապրած ժողովրդի երախտապարտ որդիների ազնվագույն մարդասիրության դրսևորում:

Վրիժառությունը, անափ վիշտն ու ցավը ամոքելու միակ միջոցը չէ: Ճշմարիտը ոչ միայն թշնամուդ ոչնչացնելն է, այլև նրան զղջալու և ապաշխարելու ուղի բերելը: Ուժն ու արժանապատվությունը բարություն ու մարդասիրություն ծնողներ են նաև: Ժամանակին Սողոմոն Թեհլերյանը և արժանապատիվ մյուս հայորդիք հայոց դահիճներին պատշաճ պատժել են: Այսօր՝ 100 տարի անց, ժամանակն է Հայոց ցեղասպանությունը վերապրածների անունից ոգեշնչել ու խրախուսել մերօրյա մարդասերներին՝ հնարավորություն ընձեռելով կյանք և արարելու հավատ պարգևել նրանց, ովքեր փրկության կարիք ունեն, ծայրահեղ ունեզուրկ ու աղքատ են:

«Ավրորա» ամենամյա մրցանակ է: Դափնեկիրն ստանում է պարգև՝ 100 հազար դոլար, և բացառիկ հնարավորություն՝ շարունակելու նվիրատվության շղթան՝ իրեն ոգեշնչած կազմակերպություններին տալով մրցանակ՝ 1 միլիոն դոլար:

Երախտագիտությունը գործով արտահայտելու գաղափարը «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության շարժիչ ուժն է: Աշխարհով մեկ սփռված այն անհամար փրկվածները, որոնք վերապրելու հնարավորություն են ստացել շնորհիվ ուրիշների մեծահոգության, համարժեք քայլ կատարելով՝ կարող են լավագույնս արտահայտել իրենց երախտագիտությունը: «Ավրորա» մրցանակաբաշխությունը ծագումով հայկական, սակայն բովանդակությամբ համամարդկային մարդասիրական նախաձեռնություն է:

Մարդասիրությունն աստվածատուր շնորհ է, որ յուրաքանչյուր մարդու հասու է այնքան, որքան նա կայացած է որպես մարդ, որպես անհատ, ընկալում է աշխարհն ու նրանում ապրող մարդկանց, օժտված է կարեկցանքով ու սիրով, բարեսեր է ու բարեգործ և համոզված է, որ այս աշխարհից այն աշխարհ իր հետ տանելու է միայն այն, ինչ սիրով տվել է իր կողքին ապրող մարդկանց, ինչն արարել ու անշահախնդիր շնորհել է...

Հատկանշական ու կարևոր է, որ նախաձեռնության հեղինակներն ու իրականացնողները ցեղասպանություն վերապրած ժողովրդի զավակներ են: Այս նախաձեռնությունն ազգի երախտագիտության աննախադեպ դրսևորում է, որ պատիվ է բերում տևական մաքառումների միջով անցած և կորցրած պետականությունը հավատի ու աստվածաշնորհ բացառիկ տաղանդի շնորհիվ վերանվաճած ժողովրդին:

Համաշխարհայնացման միտումով ազգայինն իր տեղը զիջում է համամարդկայինին, տեղեկատվական համակարգերի զարգացումն անարգել ճեղքում է պետական սահմանները, ազգային արժեքները հարկ է տեղադրել արժեհամակարգում: «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության հեղինակների ներդրումը համամարդկային արժեհամակարգում, իմ կարծիքով, համայն մարդկության փրկության բանաձևն է, որ կամուրջ է գցում ապրելու համար անհրաժեշտից անչափ շատ ունեցողներին ունեզուրկներից բաժանող օրեցօր խորացող անդունդին...

«Ավրորա» նախաձեռնությունը նաև հոգևոր երևույթ է՝ քրիստոնեական անսպառ սիրո ու մարդասիրության դրսևորում, որ իր գնահատանքն է ունենալու նաև Աստծու երկնային թագավորությունում: Իսկ երկրի վրա հոգևոր այդ երևույթի համահեղինակ Ռուբեն Վարդանյանը պատանդառված է Ադրբեջանի բանտում՝ Արցախում «տեռորիզմի ֆինանսավորման» անհիմն և շինծու մեղադրանքով: Տարօրինակ է, բայց փաստ, որ աստվածաշնորհ մարդասեր հայորդուն ցեղասպան թուրքն ահաբեկչության դրամատու է որակում, իսկ աշխարհում բռնությամբ «ժողովրդավարություն» հաստատողներն ու մարդու իրավունքներ քարոզողները կույր են ու համր: Կարծես թե Երկիր մոլորակի հզորները նոր աշխարհակարգ են փորձում սահմանել: Հուսանք, որ կգա Արդարության թագավորության ժամանակը...

Առեղծվածառատ Տիեզերքը, չընդհատվող Ժամանակը, Արեգակի լույսն ու ջերմությունը մեզ հետ են, Երկիր մոլորակն իր ուղեծրում է, կյանքը շարունակվում է...

Արագընթաց համաշխարհայնացման պայմաններում ամենախոշոր ու էական երևույթներն անգամ ժամանակի ընթացքում մանրանում ու անէանում են: Մենք էլ հավատում ենք, որ «Ավրորա» մրցանակաբաշխությունն ու հայորդյաց մարդասիրական այս հանճարեղ նախաձեռնությունն ապրելու են և տարեցտարի ավելի կարևորվելու, քանի որ համայն մարդկության առջև ծառացած մարտահրավերներին հնարավոր է դիմակայել միայն բարեսիրությամբ ու երախտագիտությամբ:

**Գագիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ**
**«ՄԱՇՏՈՑ» հանդեսի**
**խմբագրապետ**

# Անտարբերությունը մեղք է

Մեղքն անհնազանդությունն է Աստծու խոսքին: Աստվածաշնչում ասվում է. «Մեղքի վարձքը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Հռոմ. Զ 23): Կան մեղքի տարաբնույթ տեսակներ, որոնք մարդուն տանում են հավիտենական դատապարտության, դարձնում աղքատ, անարգ և վաղամեռիկ (տես Պողոս պատրիարք Ադրիանուպոլսեցի, Խրատի թանգարան, էջմիածին, 2015, էջ 244):

Եկեղեցու հայրերն առանձնացնում են յոթ մահացու մեղք՝ հպարտություն, նախանձ, բարկություն, ծուլություն, ագահություն, որկրամոլություն, բղջախոհություն: Այս բոլոր մեղքերն ունեն իրենց ենթատեսակները, այսինքն՝ մի շարք մեղքերի ամբողջություն են:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինն այս մահացու մեղքերի շարքին ավելացրեց ևս մեկը՝ անտարբերությունը, որը համարեց ութերորդը. «Այսօրուայ մեր կեանքում ես ամենից մեծ մեղքը, մի տեսակ ութերորդ «մահացու մեղք»-ն եմ համարում անտարբերութիւնը, անշարժութիւնը եւ դատարկախօսութիւնը»:

Անտարբերությունն առաջանում է սիրո, ողորմության և գթասրտության պակասի հետևանքով: Սուրբ Գրքի մի շարք հատվածներ փաստում են, որ անտարբերությունը ծանր մեղք է: Դեռ Հին Կտակարանում Տերը ցույց է տալիս, որ անտարբեր մարդիկ արժանանում են մահվան: Զրհեղեղի պատումում տեսնում ենք, որ Նոյը՝ որպես արդար և բարեպաշտ մարդ, զգուշացնում է մարդկանց, որ իրենց մեղքերի պատճառով Աստված ջրհեղեղ է անելու, սակայն նրա խոսքերը չընդունեցին, դրա պատճառով էլ կորստյան մատնվեցին (Ծննդոց է 27):

Ավետարանում Տերն ասում է. «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այնպես և դուք արեք նրանց» ( Մատթ. է 12): Այս Ոսկե կանոնը փաստում է, որ ոչ ոք չի ցանկանա, որ որևէ մեկն իր հանդեպ անտարբեր լինի, և բացահայտ մերժում է անտարբերությունը (տես Ա. Խաչատրյան, Գողգոթայի հաղթանակը, Երևան, 2018, էջ 172):

Քրիստոսի առակներից «Բարի Սամարացին» անտարբերության տիպիկ օրինակ է: Վիրավոր, անպաշտպան մարդու կողքով անցնում են քահանան, ղևտացին, և մի սամարացի, որին Իսրայելի ժողովուրդը բարև էլ չէր տալիս, չի կարողանում անտարբեր անցնել անօգնական մարդու կողքով, օգնում է նրան՝ տանելով իջևանատուն (տես Ղուկ. Ժ 29–27): Սամարացին խորհրդանշում է Հիսուս Քրիստոսին. Նա երբեք անտարբեր չանցավ որևէ մեկի կողքով:

Մեր Տերը սովորեցնում է լինել ողորմած, սիրել և գթասիրտ լինել: Աստված Ինքն այնքան շատ սիրեց, որ Իր սիրուց դրդված՝ արարեց աշխարհը: Առանց սիրո տեղի չէր ունենա արարչագործությունը:

Արարչագործության թագն ու պսակը մարդն է, որն ունի Տիրոջ պատկերը և նմանությունը: Մարդն Աստծուն նման է նաև արարելու և սիրելու հատկությամբ, որը կորցրել է՝ իր սրտի մեջ տեղ տալով անտարբերությանը: Այս մեղքն ունեցող մարդուն Գարեգին Ա Կաթողիկոսը համարում էր արդեն իսկ մեռած մարդ: Անտարբերության մեղքով տառապող մարդուն հետաքրքիր չէ ոչինչ, երբեմն նույնիսկ՝ իր անձը: Այն կարող է դառնալ մի շարք մեղքերի պատճառ, որը վնասում է ոչ միայն անհատին, այլ նաև հասարակությանն ու պետությանը: Անտարբերության հետևանքով են տեղի ունենում պատերազմները, ինքնասպանությունները, գողությունները և մի շարք բացասական երևույթներ:

Անտարբերությունը կարելի է համարել ժամանակակից աշխարհի գլխավոր ախտերից մեկը, որ տարածվել է ողջ երկրագնդով: Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում և ներկայումս էլ զգում է աշխարհի անտարբերությունն իր ճակատագրի հանդեպ: Մենք այն ժողովուրդն ենք, որ տեսել է ցեղասպանություն, պատերազմներ և ողբերգական այլ իրադարձություններ: Մեզ երբեմն թվում էր, որ այդ ամենն արդեն անցյալում է, որ ներկայումս համայն մարդկությունը զարգացել է, և ցեղասպանություն այլևս տեղի չի ունենա: Սակայն 2020 թ. Արցախյան պատերազմը և վերջին ժամանակներում Արցախի ժողովրդի նկատմամբ ցեղասպանական պատերազմներն ու բռնագաղթը ապացուցեցին, որ միջազգային հանրությունն անտարբեր է:

➥ էջ 8

# Ժամանակակից աղանդների պատմական ակունքները

Վազարամյակների պատմություն ունեցող աղանդավորական շարժումները հայ իրականության մեջ արմատավորվեցին դեռ քրիստոնեության սկզբնավորումից՝ 4—5-րդ դարերից սկսած: Աղանդավորները, չհրաժարվելով ոչ Աստծուց, ոչ կրոնից, կամենում են կարգադրել հավատքի գործերը՝ առանց Եկեղեցու միջամտության: Աղանդավորական շարժումների մասին առաջին տեղեկությունները պատմագրության մեջ հիշատակվում են 5-րդ դարից՝ գրերի գյուտից հետո: Սակայն չի բացառվում, որ մինչ այդ էլ եղել են հերձվածողական աղանդներ, որոնց մասին գրի բացակայության պատճառով տեղեկություններ չեն պահպանվել: Այս ժամանակահատվածում տարածվեց, այսպես կոչված, Անապատականների շարժումը, երբ հավատացյալները լքում էին իրենց բնակավայրերը և փախչում հեռավոր անմարդաբնակ վայրեր՝ հիմնելով միաբանություններ: Անապատականներին հարում էին ոչ միայն գյուղացիները, արհեստավորներն ու առևտրականները, այլև ազնվականներն ու անգամ հոգևորականների մի մասը:

Միջնադարում աղանդավորական շարժումները, որպես կանոն, սոցիալական շարժումներ էին և որոշ սոցիալական հենարան և դրդապատճառներ ունեին: Դրանք մեծամասամբ ուղեկցվում էին զինված պայքարով: Այս երևույթն առկա էր նաև մահմեդական իրականության մեջ (Ալի-ալլահիներ, Բաբեկ և այլն):

9—11-րդ դարերում, ավատատիրական հարաբերությունների խորացմանը զուգընթաց, ավելանում էին սոցիալական դժգոհությունները, որոնք էլ պարարտ հող դարձան նոր, ավելի ուժեղ աղանդների համար: Միջնադարյան Հայաստանում և Բյուզանդիայում հակաֆեոդալական ամենահզոր շարժումը դարձավ պավլիկյանների աղանդավորական շարժումը: 7-րդ դարի կեսերին Արևմտյան Հայաստանում ծագած այս շարժումը տարածվեց Բյուզանդական կայսրության արևելքում՝ հասնելով նաև Արևելյան Հայաստան: Արևմտյան Հայաստանում շարժման ծագումը պատահական չէր: Բյուզանդական իշխանությունների կողմից քաղաքական, կրոնական, սոցիալական, տնտեսական բազմապիսի ճնշումների ենթարկվող տեղի բնակչությունը պավլիկյանների դրոշի տակ ընդվզեց կայսրության և նրա Եկեղեցու դեմ: Եվ չնայած շարժման աշխարհիկ բնույթին ու դրդապատճառներին՝ այն հանդես եկավ կրոնական քողի տակ: Ավելի քան երկու դար գոյություն ունենալուց հետո պավլիկյան շարժումը 872 թ. դաժանորեն ճնշվեց Բյուզանդական կայսրության կողմից: Սակայն լրիվ արմատախիլ անել պավլիկյաններին չհաջողվեց: Քաշվելով անառիկ վայրեր և լեռնանցքներ՝ նրանց մի մասը ապաստան գտավ արաբական տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում, որտեղ արդեն թափ էր առել եղբայրակից թոնդրակյան շարժումը:

Թոնդրակյան շարժման հիմնադիր Սմբատ Զարեհավանցին իր գործունեության ընթացքում ծանոթացել էր պավլիկյանների ուսմունքին՝ լինելով այս աղանդի կենտրոն Տևրիկում: Եվ Հայաստանում, և՛ հարևան երկրներում ճանապարհորդելուց հետո նա հաստատվում է Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառի Թոնդրակ գյուղում, որտեղից էլ սկսում է իր քարոզը: Հենց Թոնդրակ գյուղի անունով էլ շարժումն ստացավ թոնդրակյան անվանումը: Սմբատ Զարեհավանցու գաղափարները շատ գրավիչ թվացին հայ հասարակությանը և կարճ ժամանակում տարածվեցին երկրով մեկ:

Այն, որ թոնդրակեցիներն իրենցից արդեն բավականին ուժ էին ներկայացնում, հավաստում է այն փաստը, որ նրանց հակառակորդները խուսափում էին շարադրել թոնդրակեցիների հայացքները՝ վախենալով, որ դրանք կգայթակղեն հավատացյալներին:

Իսկ ինչ էին քարոզում թոնդրակեցիները:

Մերժելով «նյութականը»՝ նրանք մերժում էին ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ իշխանության տիրող համակարգը: Իրենց հոգևոր և աշխարհիկ գործերը ղեկավարելու համար նրանք ճանաչում էին միայն համայնքների միջից առաջացած «ինքնակոչ» առաջնորդների հեղինակությունը, որոնք առաջարկում էին նոր, արդար համայնակարգ:

Թոնդրակեցիները ժխտում էին հանդերձյալ կյանքի գոյությունը և չէին ընդունում հոգու անմահությունը: Ըստ նրանց՝ իրական է և արժեք ունի միայն այս՝ աշխարհիկ կյանքը: Թոնդրակյան շարժմանը հատուկ էր տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը և ընդհանրապես հավասարությունը: Նրանք այդ հավասարությունը պահանջում էին գյուղական համայնքների, եկեղեցու և կալվածատերերի տրամադրության տակ գտնված նյութական բոլոր բարիքների նկատմամբ:

Թոնդրակեցիները մերժում էին նաև եկեղեցու ու հոգևորականության անհրաժեշտությունը: Ինչպես նշում է Գր. Մագիստրոսը, թոնդրակյաններն ասում էին, թե իրենք նյութապաշտ չեն, այլ աստվածապաշտ: Պաշտելով անտեսանելի և անշոշափելի Աստծուն՝ նրանք մերժում էին տեսանելի և շոշափելի խաչը, եկեղեցին, եկեղեցական զգեստները, եկեղեցական «խորհուրդների» անունով նվիրագործվող պատարագագործությունն ու եկեղեցական մյուս ծիսակատարությունները:

Ժխտելով հանդերձյալ կյանքն ու հոգու անմահությունը՝ նրանք չէին ընդունում երկնային հատուցում կամ պատիժ մարդկանց երկրային մեղքերի համար: Նրանք այն համոզմունքին էին, որ մարդու փրկությունը հնարավոր է միայն այս կյանքում, որտեղ էլ պիտի կառուցվի երկնքի արքայությունը, և վերացվեն ամեն տեսակի բռնություն, անիրավություն և կեղեքում: Եվ այս առաքելությունը նրանք պետք է իրականացնեին իրենց համայնքի իրավահավասար հավատացյալներով՝ առանց հոգևոր և աշխարհիկ իշխանության միջամտության:

Թոնդրակյան շարժումը չնայած ունեցավ տեղային ծագում, այնուամենայնիվ հմտորեն օգտագործվեց հարևան ժողովուրդների կողմից: Գլխավորապես Բյուզանդիան, որը ևս պայքարում էր թոնդրակեցիների դեմ, այն փորձեց օգտագործել Հայ Եկեղեցին ու հայոց պետականությունը ներսից քայքայելու քաղաքական նկրտումներով: Բագրատունյաց Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերում ստեղծված թոնդրակյան աղանդավորական համայնքներն ավերիչ ու կործանարար եղան երկրի համար: Այն խարխլեց Հայ Եկեղեցու և պետականության հիմքերը, պառակտեց ազգային միասնականությունը: Ստեղծված բարդ իրավիճակում մի կողմից սելջուկ-թուրքական հրոսակներն էին արշավում Հայաստանի վրա, մյուս կողմից «բարեկամ» Բյուզանդիան դավադրաբար փորձում էր տիրել Հայաստանին, իսկ ներսից էլ թոնդրակեցիներն էին խարխլում երկիրը:

Թե՛ իշխանությունները, թե՛ հոգևորականությունը անողոք պայքար սկսեցին նրանց դեմ: Իսկ թոնդրակեցիները հալածանքներից խուսափելու համար գործում էին ծայրաստիճանի գաղտնիության պայմաններում, քանի որ բացահայտվածները ենթարկվում էին դաժան պատիժների՝ բանտարկության, խոշտանգումների, և նրանց դեմքին աղվեսադրոշմ էր դրվում, որպեսզի չկարողանային թաքնվել հասարակությունից:

Թոնդրակյան շարժումը ճնշվեց: Աղանդի հետևորդներներն սպանվեցին, ողջ մնացածներն էլ փախուստի դիմեցին, սակայն աղանդավորությունը՝ որպես երևույթ, հայ հասարակությունից արմատախիլ անելն այլևս դարձավ մարտահրավեր:

**Հերմինե ՍԱՀԱԿՅԱՆ**

# Եղիշե Դուրյանի անտիպ նամակներն Արշակ Չոպանյանին

17 օգոստոս 1922 թ.

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻՐ ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

Բարիզ

Հիւրաբար տեղս գտնուող Տիգրանակերտցի Արժ. Սահակ քահանայ Մինասեան գրով մը դիմելով մեզ կը յայտնէ թէ ժամանակին Մուսուլի մէջ Ասորի կնոջէ մը գնած է 3—4 կտոր հին ձեռագիր Մագաղաթեայ արժէքաւոր գրքեր, Աւետարան, Սաղմոս, Նարեկ, Տօնացոյց, եւ ղրկած է զանոնք Բարիզ Հնչակեան կուսակցութեան Ատենապետ Պ. Աւետիս Նազարբէկեանի, որմէ պատասխան ալ առած է այդ ձեռագրերը վերստանալու համար, որեւէ պատասխան չէ ստացած: Արդ, իր խնդրագիրը եւ անոր կցած երկու Քարդ-փոսթալի եւ նամակի պատճէնները Ձեր Սիրելութեան կը ղրկենք, որպէսզի եթէ հնարաւորութիւն ունիք հաճէիք ստուգել եւ իմացնել թէ Պ. Նազարբէկեանի ղրկուած այդ գրքերը այժմ ո՞ւր եւ որո՞ւ քով կը գտնուին, եւ ի՞նչ միջոցաւ կարելի է զանոնք վերադարձնել իրեն տիրոջ Տ. Սահակ Քահանայիին: Վասնզի յիշեալ Քահանան կը փափաքի նուիրել այդ գրքերը Ս. Աթոռոյս Մատենադարանին:

Ինչպես 250 թիւ մեր նամակով հաղորդած էինք Ձեր Սիրելութեան, Կարկուրեան Դատի մասին մեր փաստաբաններուն պատրաստած տեղեկագրին բնագիրը ամսոյս 14ին ղրկեցինք Ազգ. Պատուիրակութեան Վսեմաշուք Նախագահին:

Ողջունիւ Սիրոյ, Աղօթարար

ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Եղիշէ Դուրեան

3. Գ.— Հաճեցէք, յետ քննութեան

վերադարձնել մեզ միայն խնդրագիրը:

9 մայիս 1923 թ.

Երուսաղէմ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻՐ ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

ԲԱՐԻԶ

Հաճոյքն ունեցանք ընդունելու «LA ROSERAIE D'ARMENIE» Ձեր վերջին հրատարակութենէն օրինակ մը, յանուն Մեր, եւ 10 օրինակ ալ նուիրուած Ս. Աթոռոյս գրադարանին համար:

Ձերմապէս կը գնահատենք Ձեր ազգօգուտ այդ երկասիրութիւնը, որ կոչուած է Հայ Գրականութիւնը ծանօթացնել Եւրոպայի, եւ անոր մէջ կը նկատենք Հայ Ազգին գրական ու Արուեստագիտական հոգւոյն փառաւորումը:

Այդ հրատարակութեան շուրջ, SCHLUM BERGER ի, MAUCLER ի եւ ուրիշներու գրած յօդուածները որչափ մեր գրականութեան, նոյնչափ ալ Ձեր հանճարին մատուցուած գեղեցկագոյն հարկը կը համարինք, եւ մեզ ու մեր տառապած Ցեղը մխիթարուած կը գտնենք այդ մեծարանքով:

Ի սրտե շնորհաւորելով Ձեր այդ օգտաշատ եւ գեղեցիկ գործը, յաջողութեան եւ արդիւնաւորութեան ջերմագին մաղթանքներով կը նուիրենք Ձեր Սիրելութեան մեր Հայրական օրհնութիւնները:

Ողջունիւ Սիրոյ, Աղօթարար

Պատրիարք Երուսաղէմի

Եղիշէ Դուրեան

3 օգոստոս 1923 թ.

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻՐ ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

ԲԱՐԻԶ

Տնօրէն ժողովոյս հետ ուշադրութեան առինք Ձեր Սիրելութեան Յուլիս 20 թուակիր նամակը:

Ասկէ առաջ, Տիար Յ. Մրմրեան մեզի ալ դիմած էր թէեւ փափաք յայտնելով տեղս գալ եւ Վանուցս մէջ հաստատուիլ, սակայն, ներքին կարգ մը պատճառներով հնարաւոր չէր դատուած գոհացում տալ իր խնդրանքին: Կը ցաւինք, որ կարելի պիտի չըլլայ իր մասին տարբեր կարգադրութիւ մ՚ ընել:

Կը յայտնէք նաեւ, թէ Տ. Կոմիտաս Վարդապետը Երուսաղէմ փոխադրելու նպատակաւ, Պաշտպան Յանձնախումբի Նախագահ Գեր. Տ. Վռամշապուհ Ծ. Վարդապետի կողմէ դիմում պիտի ըլլայ մեզի:

Տ. Կոմիտաս Վարդապետի հոս առաքումը երկու ձեւով խորհուած է անշուշտ. կամ Վանուցս մէջ բնակարան եւ դարման յատկացնելու իրեն, եւ կամ, քաղաքիս բուժարաններէն մէկուն մէջ տեղաւորելով, հոգածու խնամատարութեան առարկայ ընել զինք:



Այս կրկին կարգադրութիւններէն եւ ոչ մին գործնական եւ յարմար չնկատուեցաւ դժբախտաբար, եւ կը ցաւինք որ կարելի պիտի չըլլայ գոհացում տալ ըլլալիք դիմումին: Որովհետեւ, նախ, հնարաւորութիւն չկայ բացարձակապէս, հիւանդ պահպանել եւ դարմանել Վանուցս Միաբանական կամ Ուխտաւորական շրջանակներու մէջ, ուր տրամադրելի բնակարան չէ մնացած բնաւ: Յայտնի է, թէ Վանքը խճողուած է ներկայիս հին եւ նոր գաղթականներով. իսկ Չամ եւ Պահչէ թաղերը Որբանոցի վերածուած են: Երկրորդ, քաղաքիս մէջ մտային հիւանդութեանց մասնաւոր Դարմանատուներ չկան. միայն Բեթղեհէմի մէջ կայ խելագար կանանց յատուկ փոքր հիւանդանոց մը, ուր այրեր չեն ընդունուիր:

Շատ գոհ պիտի մնայինք, եթէ հաճէիք այս կարեւոր պարագաներուն վրայ Պաշտպան Յանձնախումբի մասնաւոր ուշադրութիւնը հրաւիրել, որպէսզի, դժբախտ Վարդապետի դարմանումին համար տարբեր կարգադրութիւն մը մտածուի, եւ կը կարծենք, թէ շատ աւելի դիւրին պիտի ըլլայ խնամել զայն տեղդ, կամ Եւրոպական ուրիշ միջավայրի մը մէջ, ուր չեն պակսիր յարմարագոյն Դարմանատուներ եւ մասնագէտ բժիշկներ:

Անշուշտ ընդունած էք մեր վերջին նամակը, որով տեղեկութիւններ հաղորդած էինք Ձեզի, Կարկուրեան Դատի ներկայ վիճակի մասին, առ այժմ, այդ մասին նոր բան մը չունինք Ձեզի տեղեկացնելու:

Ճէմալ Փաշայի բռնագրաված հողի դատը յետաձգուած է, թելադրութեամբ Վանուցս Փաստաբաններուն, որպէսզի, այդ գետնին վրայ իրաւունք ունենալու յաւակնութեամբ՝ չթոյլատրուի Կարկուրի, իբրեւ երրորդ անձ մտնելու՝ Խնդրոյն մէջ:

Ուրախ ենք որ մեզմով եւ Վանքի ճակատագրով կզբաղուիք միշտ: Շնորհակալ ենք Ձեր այդ բարի զգացումներու համար, եւ պատեհ առթիւ, եթէ դատերը մանաւանդ լաւագոյն ընթացք մը առնեն, պիտի փութանք Ձեզի ալ հաղորդել այդ ուրախարար լուրերը:

Չը մոռանանք ըսել, որ Ձեզ «Roseraie» ներէն մէկը, զոր յատկացուցած էիք Երուսաղէմի Կառավարիչ Մր. Սթօրսի, յանձնուեցաւ իրեն, վերջին ճամբորդութենէ վերադարձին:

Նուիրելով Ձեզ հայրական օրհնութիւնները,

Ողջունիւ Սիրոյ, Աղօթարար

ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Եղիշէ Դուրեան

**Հրատարակության պատրաստեց Սիլվա ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ**

*ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ*

# Գրիգոր Նարեկացին և 20-րդ դարի հայ գրականությունը

Գրիգոր Նարեկացու կերպարն ու ստեղծագործությունը ամբողջ միջնադարում, նոր և նորագույն շրջաններում եղել է հայ մտավոր կյանքի ուշադրության կենտրոնում: Դա երկարատև ճանապարհ է, որը 12-րդ դարում սկսվում է Նարեկացու անձի սրբացումով ու ավանդազրույցներով, նրա ստեղծագործությունների արտագրում-տարածումով, երկերի տպագրությամբ ու լուծմունքով, ի վերջո, նրա կենդանի ներգործությամբ հայ մտավոր, առավել չափով՝ գրական կյանքի վրա:

20-րդ դարի գրեթե բոլոր խոշորագույն գրողներն այս կամ այն չափով կրել են նրա բարերար ազդեցությունը: Ընդ որում՝ Նարեկացին հարություն առավ և՛ որպես անձնավորված կերպար, և՛ որպես նյութ, բան, ասելիք, և՛ որպես արվեստ, բանարվեստ, և՛ որպես ընդհանուր հայացք ու փիլիսոփայություն: Նարեկացին միաժամանակ իր ներգործությունն ունեցավ թե արևմտահայ, թե արևելահայ իրականության մեջ: Այս շրջագծում են Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Ա. Յարճանյանը (Սիամանթո), Մ. Մեծարենցը, Դ. Վարուժանը, Վ. Տերյանը, Լ. Շանթը, Ե. Չարենցը, Պ. Սևակը, Հ. Շիրազը, Հ. Սահյանը և ուրիշներ:

Նարեկացին և հայ գրականությունը հիմնադրույթն առաջնային է դարձնում մի գլխավոր հարց՝ մարդու կատարելագործումը և կատարելության ձգտումը, ինչն ամբողջ հայ գրականության առանցքային գծերից մեկն է և մի կողմից պայմանավորված է հայ ժողովրդի պատմական հոգեկերտվածքով, մյուս կողմից՝ քրիստոնեական դավանաբանությամբ:

Նարեկացու ստեղծագործության հանդեպ առանձնակի հետաքրքրություն է ունեցել *Միսաք Մեծարենցը*: Ըստ վկայությունների՝ Նարեկը նրա համար եղել է ոչ միայն սեղանի գիրք, այլև բարձի տակի գիրք: *«Ինքնադատության փորձ մը «Ծիածան»ին առիթով»* (1906) հոդվածը Մեծարենցն ավարտում է այս տողերով. «Բանաստեղծին ձայնը տիեզերական հարաբերականության մը լարը պետք է ըլլա, բոլոր գոյություններուն համադրական թրթռումովը տրոփուն»: Դեպի Նարեկացի տանող ավանդույթի հիմքը փիլիսոփայական այս դրվածքի մեջ է, ինչը տեսական-գեղագիտական հիմնավորում է ստանում *«Քննադատությունը»*, *«Նարեկացիին հետ»*, *«Հետամնաց բարեկենդան»* հոդվածներում:

Մեծարենցի թարմ մտածողությունը՝ հատկապես փոխաբերականացված պատկերները, դեմ առան ժամանակի քննադատության դիմադրությանը (Եռնվք Արմեն, Փայլակ՝ Ժագ Սայապալյան, Տիգրան Չյոկյուրյան), որից բանաստեղծը պաշտպանվեց Նարեկացուն վկայակոչելով. «....այն ատեն հարկ պիտի ըլլար մեր գրական հսկային՝ Նարեկացիին փոխաբերություններուն ալ դատավճիռ կարդալ»: Այնուհետև, ապացուցելու համար, որ *«սենպոլիսմը* կրնա ստացական չըլլալ», վերստին բերում է «պանծալի Նարեկացիին օրինակը»: Սրանից հետո է, ահա, որ գրվում է *«Նարեկացիին հետ»* հոդվածը, որի մեջ միջնադարի գրական հսկան նրան ներկայանում է որպես «....սրբության իղձին կրակովը վառված անշեջ մորենի, մեծ աղոթասաց բանաստեղծ»: Իր թեև տառապաշունչ, բայց արտաքուստ խաղաղ գեղարվեստական կերպարի առջև «Նարեկը ալեկոծություն մըն է. հոգեկան վրդով մրրիկ մը և ալեկոծություն մը՝ ուր բառերն ու կշռույթները ալիքներու բաղխումին չափազանցությունը՝ անոնց ինքնակործան շարժումները՝ անոնց իրարահալած խաղացքն ու անկումներն ունին»:

Բանավիճելով քննադատների դեմ՝ Մեծարենցն ասում է, որ «կարմիր կարոտ»-ը հասկանալու համար պետք է «հրավառ կարոտ»-ից մեկ քայլ այն կողմ անցնել, որ իր օգտագործած և քննադատության կողմից քմահաճությամբ ընդունված բառերը գալիս են նաև Նարեկացուց, ինչպես օրինակ՝ *փողփողենէջ, լռարան, զարմանուհի, բազմազեղում* և այլն, որոնք քննադատները համարել են «բրածո»: Ինչ բրածոյի մասին է խոսքը, առարկում է Մեծարենցը և շարունակում. «....նախնի մատենագիրներ՝ մեզնե շատ ավելի լավ կ'ըմբռնեին լսելության և առոգանության Գեղեցիկը. — գիտեին վեհաշուրթ արտասանել բառերը ու լսել անոնց վեհանդորոր ձայնը <....>: Նախնի մատենագիրը գիտեր ծովաձայն հնչեցնել բառերը <....>: Գիտեր ծիծաղախիտ ժպտեցնել բառերը....»: Այսքանից հետո նա բերում է Նարեկացու նմանաձայնության օրինակը՝ «Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանայր....», և դրան զուգադրում է իրենը. «Արև ծիծաղի, ծաղիկ ծամերու....»: Սրան հետևում է Մեծարենցի եզրահանգումը. «Փոխաբերությանց ու նմանությանց ուժգնություններ ու նորություններ՝ զորս կը սիրեմ գործածել՝ կարծել տվին թե *սենպոլիսթ* մ'եմ. բայց ադոնցմով *կը հիշեցնեի* միայն *սենպոլիզմը*՝ որուն բոլորանվեր ուխտադիր մը չ'ըլլալե զատ՝ հակընդդեմ բնութենապաշտ հակումներ ալ ունիմ անոր հանդեպ. այսինքն կը նախընտրեմ ճաճանչավետ Կյանքը, բաբախուն ու եռուզեռող Բնությունը՝ խորհրդանշանական զուսպ ցրտություններեն»:







Նարեկացին Մեծարենցի համար դարձավ ինքնապաշտպանական վահան՝ ընդդեմ ամեն տեսակի գրական հարձակումների: Իսկ որ ամենակարևորն է՝ Նարեկացին Մեծարենցին տվեց լույսի բանաստեղծականացման խանդավառությունը, տվեց փոխաբերական մտածողության թարմություն, տվեց իր բառապաշարը և իր բառակառույցներով նոր բառագանձ ստեղծելու հնարավորություններ:

Նարեկացու տաղերի մեջ իշխող ցնծերգի տոնական հանդիսությունը խանդավառել է նաև Մեծարենցին: Այդ մթնոլորտի մեջ թե՛ Մարդն է, թե՛ Բնությունը: Բնության այն խայտանքը, գույների այն խաղը, լույսի հազարերանգ ցոլափոխանքները, որ կենդանացնում են Մեծարենցի պոեզիան, գալիս են Նարեկացուց:

Նարեկացուց եկող բառապաշարն ու պատկերային մտածողությունը յուրովի արտահայտվել է նաև *Ատոմ Յարճանյանի (Սիամանթո)* պոեզիայում:

Յարճանյան—Նարեկացի ստեղծագործական կապը ժամանակին նկատել է Դ. Վարուժանը: Նախ՝ նա Յարճանյանի տաղանդի ամենից տիպական գիծը համարում է երևակայությունը, որին «միացած զգացումը կը ծնի վսեմը»: Նրա բանաստեղծության ամբողջությունը «տպավորության համադրությունն է,— բանաստեղծին ուժականությունը (dinamisme), մտածումներուն մսավորումը»: Յարճանյանին համարելով միստիկ՝ Վարուժանը շարունակում է. «Իբրև միստիք, Սիամանթո գրեց հեղափոխության Նարեկը և Հովհաննու Հայտնությունը»:

Շուրջ մեկ հազարամյակի ընդմիջումից հետո, առաջին հերթին դարձյալ Նարեկացու ավանդույթների ոգեկոչումով, Յարճանյանը վերականգնեց ազատ բանաստեղծությունը: Նարեկացիական ավանդույթները Վարուժանն ավելի որոշակի է դարձնում *««Սուրբ Մեսրոպ» Սիամանթոյի»* թեև սեղմ, բայց տարողունակ գրության մեջ. «Տառերու գյուտին առթիվ գրված պրակ մը, որ պիտի կարծվեր Նարեկի մատյանեն փրթած <....>: Սիամանթո վերադիրներու գրիչ մըն է, ինչպես իր վարպետը՝ Նարեկացին <....>: Սիամանթո իր այս քերթվածին մեջ տվավ իրեն համար նոր ձև մը քերթելու, որ իր մյուս երկերուն մեջ հազիվ կուրվագծվեր. այս՝ զինքը Նարեկացիին հետ կապող թելն էր, զոր ամրակուռ շղթայի մը վերածեց»:

Յարճանյանի պատկերի շարժիչը հզոր երևակայությունն է, որ արտահայտվում է փոխաբերական մտածողության միջոցով: Այդ երևակայության զգացական հորձանքը չտեղավորվելով նախ՝ մեկ բառի մեջ, ստեղծում է բազմաբարդ բառեր, որոնք ինքնին բառապատկերներ են, և ապա՝ այդ տարերքը, չսպառվելով մեկ պատկերի մեջ, դառնում է պատկերների հաջորդական շարք՝ խոսքը վերածելով թվարկումների: Այդպիսին է ամբողջ *«Մատյան....»*-ը: Այդպիսին են նաև Յարճանյանի քերթվածների առանձին հատվածներ, բայց առավել բնութագրականը *«Սուրբ Մեսրոպ»* պոեմն է, որ ասես գրված լինի որպես Նարեկի շարունակություն: Մի կողմից՝ Աստծու փառաբանություն, մյուս կողմից՝ անձի ինքնախոշտանգում, որ նարեկացիական հակադրամիասնությամբ առաջ են շարժում խոսքը: Ահա «Սուրբին աղոթքը» հատվածի սկիզբը.

*Լո՛ւյս տուր ինծի, Աստվա՛ծ անհերքելի,*
*Տիեզերքի անմեկնելի ճարտարապետ,*
*Ճակատագրի և ճանաչման ստեղծի՛չ,*
*Շունչի՛ մրրիկ, կեդրոնական կարողություն,*
*Սուրբ սեղանիդ սարկավագն Մեսրոպ՝*
*Իր մշուշապատ մեծ երազին՝*
*Քու ձեռքերդ հստակությո՛ւն կ'աղերսե...*
*Օգնե՛ ինծի, մեծապարգև իմաստություն,*
*Ես՝ անցուպ հովիվ մեծ քարոզիդ,*
*Ես՝ եղկելի մահկանացու, ես՝ դժգույն անտես*
*Հայկազնյան ահեղ ցեղին....*

Բանաստեղծությունը շնչող մարմին է, որի կենդանությունը պայմանավորված է այն ոգով, որ ստեղծողը փոխանցում է նրան: Յարճանյանի ոգին իր մեջ կրում է Նարեկացու ոգու հզոր շունչը:

Յուրահատուկ է Լևոն Շանթի վերաբերմունքը Նարեկացու հանդեպ: Շանթի *«Հին աստվածներ»* դրամայի գործողությունները տեղի են ունենում գրության ժամանակից հազար տարի առաջ, ինչը զուգադիպում է Նարեկացու ժամանակներին: Այն կարծիքի ենք, որ որպես Վանահոր նախակերպար՝ ծառայել է հենց ինքը՝ Նարեկացին: Եվ Նարեկացուն, և՛ նրա գեղարվեստական մարմնավորում հանդիսացող Վանահոր կերպարին առաջնորդում է անշեղ ու կամային հավատը Աստծու արարչագործ ուժի հանդեպ: Շանթի Վանահայրը հենց ինքը՝ Նարեկացին է. դա այդպես է ոչ թե սոսկ փաստական նմանությամբ (ինչը կարող է նաև վիճարկվել), այլ ոգու նույնությամբ, ինչն արդեն անվիճարկելի է: Ավելացնենք, որ Շանթին ևս, ինչպես Նարեկացուն, ապա՝ ինչպես իր ժամանակակից Թումանյանին, ուղեկցել է կատարելության որոնման գերնպատակը, ինչն արտահայտվել է ոչ միայն *«Հին աստվածներ»*, *«Կայսրը»* թատերգություններում, այլև ամբողջ ստեղծագործական առաջադրույթի մեջ:

*Վահան Տերյանը*, լինելով քահանայի որդի, Նարեկը պետք է տեսած լիներ մանուկ հասակից իսկ: Իսկ հետագա տարիները պիտի բերեին առավել գիտակցական ու սթափ հայացք: Ըստ վկայությունների՝ Տերյանն ունեցել է Նարեկի իր անձնական մատյանը՝ բազմաթիվ անդրադարձումներով. «....գրքի Տերյանի օրինակի լուսանցքները մեզ են հասել պոետի նշումներով»:

Նարեկացուց Տերյանը յուրացրեց *«ան»* ժխտական նախածանցով սկսվող բառակազմական կաղապարը: Համանման կազմության բազմաթիվ բառեր նա վերցրեց Նարեկացուց և նորերն էլ ստեղծեց դրանց նմանողությամբ: Ընդհանրապես երկուսի ստեղծագործության մեջ էլ *«ան»* ժխտական նախածանցով բառերի թե՛ օգտագործումն ընդհանուր բառապաշարից, թե՛ ինքնաստեղծումը նկատելի թիվ և որակ են կազմում: Ահա նմուշներ Նարեկացու համապատասխան բառերից՝ *անմերձենալի, անըմբռնելի, անտեսանելի, անշոշափելի, անորոնելի, անճառելի, անիմանալի, անխարդախ, աննենգ, անգայթակղելի, աներկբա, աննահանջ, անհարիր, անվայրափակ, անըստգյուտ, անստվերագիր, անտխուր, անբորբոք, անաղոտ, անմեղադրելի, անհաս, անքնին, անճառ, անպատում, անեղծ, անկապուտ (անկապտելի, անկորուստ), անտեսանելի, աներկբա, անպակասելի, անստեղծ, անմաքուր, անհարմար, անհասություն, անոխակալություն, անկշռելի, անարատ, անկենդան, անբռնադատ, անարժան, անվատնելի, անծախ, անաչառ, անաղտ, անխոտոր, անխոտորնակ, անընդմիջելի* և այլն:

Ահա նմուշներ նաև Տերյանի համապատասխան բառակազմից՝ *աննշմար, անհոգի, անգին, անծայր, անծիր, անհաս, անմոռաց, անհայտ (անհայտներ), անհուն, անտես, անծանոթ, աներևույթ, անտրտունջ, անդողդոջ, անակնկալ, անուրախ, անհանգստություն, անլաց, անխոս, անսահման, անվերադարձ, անդարձ, անսովոր, անվերջ, անհոգ անթափանց, անանց, անամոք, անհագ, անպատիր, անհաղթ, անկարող, անհույս, անընդհատ, անհուշ, անժամանակ, անաղմուկ, անհաստատ, անխուսափելի, անաղոտ, անկյանք, անել, անեզրական, անմութ, անդադար, աննպատակ, անարև, անսուտ, անբուխ, անզոր, անեղծ, անայլայլ, անեզերք, անվախճան*: Այսքանը (և այն էլ ոչ լրիվ) միայն «Մթնշաղի անուրջներ» շարքի 77 բանաստեղծության մեջ: «Երկիր Նաիրի» շարքից ավելացնենք բառակազմական այդ ձևը լրացնող ևս մի քանի նոր բառ. *անխնդում, անխինդ, անգութ, անարգված, անդուլ, անլույս, անպարտ, անարատ, անհպարտ, անարվեստ, անբիծ*: Այս բառակազմությամբ Տերյանն ստեղծում է *աննեխ* բառը:

Տերյանի պոեզիան, ինչպես Նարեկացունը, հարուստ է հնչյունական նմանաձայնություններով, որոնցից հիշատակենք համապատասխան հատվածների առանձին տողեր՝ «Աշնան մշուշում շշուկ ու շրշյուն...», «Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում...», «Շուրթերում Ձեր մաքուր ու բուրյան...»:

*Շարունակելի*

**Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ,**
**բ. գ. դ., պրոֆեսոր**

# Թումանյանը և Անհունը



Աստված, տիեզերք, երկինք, հավերժություն, արև, աստղ, ամպ, լույս, Սիրիուս, Արուսյակ և անհունին առնչվող, տիեզերական խոհեր գաղափարանշող այլ եզրույթներ շատ են շրջանառվում Թումանյանի ստեղծագործություններում, ընդ որում՝ խոսքը ստեղծագործական տարբեր ժամանակափուլերի մասին է: Ինքնաճանաչողության խնդիրն ամենայն հայոց բանաստեղծին հաղորդակցության մեջ է դնում տիեզերքի հետ՝ հոգեբանական նույնացում և մերձեցում, հուզական ապրումակցում, վերագրումներ և առաջնագումներ, ներհայեցողություն, որ ճառագայթում է դեպի անհունը և այլն. «Նայեցի տիեզերքի մեծությանը, սուզվեցի նրա անեզրության մեջ.... Հասու եղա աստղերի կյանքին ու մարդու ոչնչությանը: Նայեցի բնությանը և նրա բոլոր արարածներին: Եվ ինչով է պարծենում մարդը. նա մինն է նրանցից, և ուրիշ ոչինչ.... Նայեցի մարդուն իր ծննդյան օրից մինչև մահը... ամեն դիրքի վրա, նա է միայն բարձրը, որ կանգնած է իր ոտքերի վրա, նա է միայն գեղեցիկ, որ լուսավորված է իր սեփական լույսով, իր ներքին լույսով լուսավորվում է իրենից»: Ըստ էության՝ տիեզերքի անաղարտության ու մեծության խորապատկերին նաև հակադրվում են մարդամահկանացուի փոքրությունն ու մեղավորությունը:

Ժամանակի ընթացքում տարբեր ժանրային ստեղծագործություններում բանաստեղծի գոյութենաբանական խոհափիլիսոփայությունն ապրել է ներքին զարգացում, և այդ ճանապարհին առավել նշանավորվում է գոյութենական ընդվզումը.

*Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.*
*Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.*
*Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,*
*Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:*

Տիեզերքը դառնում է ապրելու արժեքաբանական համակարգի որոշակիության տարածք, և սահման հասկացությունը կատարելության իմաստ է ստանում: Տիեզերքին առնչվող բոլոր բանաստեղծություններում և քառյակներում Թումանյանը գոյաբանական առումով գերազանցում է ինքն իրեն ու աշխարհին՝ իշխելով գաղտնախորհուրդ տիեզերքի վրա: Եվ այդ ինքնահաղթահարումներն ինքնանպատակ չեն. նա «հոգու անհունի հրճվանքով» հաստատում է բարձրագույն արժեքների գոյությունը՝ գերադասելով դրանք մարդու անձնիշխանությունից ու չարությունից.

*Վերանում է վեր հոգիս զըվարթուն—*
*Չըկա մոտ ու տար, չըկա վեր ու ցած,*
*Տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն,*
*Ու ես մի ազատ՝ անտարբեր Աստված:*

Երկինքը՝ որպես գոյութենական տարածք, Հովհաննես Թումանյանին հրապուրել է մանկուց, երկինքը նրա ներքին ուսուցիչն էր (գուցե նաև անհունի հետ հաճախակի առերեսումից էր այդքան բյուրեղային, պարզ և էպիկական՝ անձնական կյանքում թե ստեղծագործությունների մեջ). «Պատանի ժամանակ սիրում էի մեր հանդերում ու բլուրների վրա, ծառերի տակ մեջքիս վրա պառկել ու ժամերով խորասուզվել երկնքի մեջ կամ բնության: Թռչելու տրամադրություն ունեի միշտ, և ինձ թվում էր միշտ, թե կարող եմ օդում թռչել, էնպես թեթև էի զգում, և այժմ էլ ինձ թվում է, թե թռչում էի կամ թռել եմ: Գիշերների լռության մեջ միշտ ականջ էի դնում Դեբեդի ձենին, որ գալիս էր խոր ձորից երբեմն խուլ ու խոր, երբեմն պարզ ու ահավոր: Եվ կարծես խոսում էր հոգուս հետ: Իմ մեծ ուսուցիչը՝ Դեբեդի վշշոցը, աստղալի երկնքի տակ քնելը և հանդերում մենակ կանաչում պառկելը ժամերով՝ երկնքի մեջ խորասուզված հայացքով»:

Նվարդ Թումանյանի հուշերում ընթերցում ենք. «Մի անգամ ասաց զրույցի միջոցին. «Անհունության գաղափարը մեծ գաղափար է. մի ժամ մտածելը շատ ծանր բան է — խելագարության հասցնող բան... Մարդիկ սովորություն չունեն երկնքին նայելու, մինչդեռ շատ է կարևոր».... Տիեզերքից էր խոսում, կյանքի ու մահվան գաղտնիքներից, կյանքի ունայնությունից, գոհունակության զգացումից, Արևելքի իմաստուններին էր մտաբերում. «Լավ է ասում Օմար Խայամը՝ ....ինչ ենք մենք, ինչ է մեր կյանքը էս ծով օվկիանոսում— մի հյուլե անցնող»»:

Տիեզերքի անհունության հետ խոր նույնացումներն ընդարձակում էին բանաստեղծի հոգեկան աշխարհի սահմանները, խորացնում իմացական դաշտը. «Յոթ-ութ տարեկան հասակում նա «եզնարած» էր, բայց քանի որ շատ երազկոտ երեխա էր, եզները միշտ կորցնում էր: Տանում էր հանդ, բաց էր թողնում, ինքը մի քարի գլխին նստում կամ մի ծառի տակ պառկում և անձնատուր էր լինում իր երազներին: Ժամերով հիանում էր վերջալույսի վարդագույն ամպերով, Չաթինդաղի գլխին ամպերի խաղով, նրանց դանդաղ ու սահուն ընթացքով և երազում.... Պառկում էր ձորափին, լսում Դեբեդի վշշոցը, թռչունների ծլվծոցը, ծղրիդներին, իսկ ուշ երեկոյան պառկում էր բաց երկնքի տակ, նայում աստղազարդ երկնքին ու մտածում, երազում»:

Երկնքի, աստղերի ու տիեզերքի հետ ներքին հաղորդակցումից են ծնվում, ինչպես նշեցինք, Թումանյանի վիպական մաքրությունն ու ներդաշնակությունը: Բանաստեղծական յուրաքանչյուր մենախոսություն կամ երկխոսություն անմիջականորեն ունեն խոսակից, և խոսակիցը մի դեպքում տիեզերքն է, մյուս դեպքերում՝ երկինքն ու աստղերը: Նվարդ Թումանյանը գրում է. «Առանձնապես սիրում էր Սիրիուսը և Արուսյակը, նրանց փայլն ու գույնը: Հաճախ մթնշաղին արթնացնում էր մեզ, որ մենք էլ տեսնենք Սիրիուսի հիասքանչ առկայծումը կամ Արուսյակի հրաշագեղ փայլը: Մենք էլ սիրեցինք աստղերը, և ամեն մեկս մի աստղ էինք ընտրել մեզ համար. մեկս Արուսյակը, մյուսը՝ Սիրիուսը, Օրիոնը և այլն: Հայրիկի այդ ոգևորության արգասիքը եղան «Արուսյակ» և «Սիրիուսի հրաժեշտը» բանաստեղծությունները»:

Բովանդակային ուշագրավ գաղափար կա «Արուսյակ» բանաստեղծության մեջ. Արուսյակը պետք է գա և զարկի «չարին ու չարքին», հալածի մութը: «Լույս ցերեկը պետք է հորդա» և դառնա արդար ու ազնիվ համակեցության տեսլական: Գրելու ազդակ է եղել նաև 14-ամյա Վիկտոր Համբարձումյանի այցը բանաստեղծին: Դա 1922 թ. ամռանն էր: Զրույցի ժամանակ ապագա խոշորագույն գիտնականը Թումանյանին տեղեկություններ է հաղորդել Սիրիուսի մասին: Ն. Թումանյանը ևս հիշում է, որ գրվել է 1922 թ. ամռանը. «Աստղերով էր հետաքրքրվում և այդ օրերին էլ գրեց «Սիրիուսի հրաժեշտը»:

Տիեզերքի հետ համարժեք հարաբերություններ կերտելով՝ բանաստեղծն առանձնացավ իր ինքնաբավ ամբողջականությամբ և տիեզերական ամբողջությանը պատկանելու վստահությամբ: Տիեզերքը, անհունն իր մեջ կրող պոետը, որն իր գրականությամբ ամրապնդում է հասարակության հոգևոր հիմքերը, կատարելությունը հասանելի բաղձանք է դարձնում:

«Անուշ» պոեմում երկինքը, աստղերն ու դյութիչ գիշերը ամբողջացնում են Համբարձման գիշերվա և սիրահարների հանդիպման համայնապատկերը: Համբարձման գիշերվա նախերգանքն ու վերջերգը, գոյութենապաշտական իմաստ և խորհուրդ կրելով, նախանշում են հոգևոր սկիզբը, ընթացքն ու ավարտը: Հեղինակը ուժ, զորություն և մոգականություն է հաղորդում աստղերին՝ ակնկալելով. «Ջուրն ու ծաղիկ աստղունք դրել, // Խնդիրք արել աստղերին, // Փափագ սրտով խընդիրք արել՝ // Բարի ժպտան իր սերին»: «Աստվածային անհաս խորհուրդը» բովանդակում է «աշխարհից հեռու լազուր կամարը», իսկ «հրաշալի երջանիկ վայրկյանը» կապվում է «ոսկի երկնքի դռների» բացման հետ.

Տիեզերական գրականության արտացոլումներ են նաև քառյակները: «Հոգիս՝ տանը հաստատվել» սկզբնատողով քառյակի մեջ տիեզերքը դառնում է Թումանյանի հոգու ապաստարանը՝ իդեալական մի աշխարհ, ուր տանում է նաև ընթերցողին՝ հակադրելու ոչ միայն աշխարհի չարությանն ու ողբերգություններին, այլև մահվանը: Այսինքն՝ մարդն այստեղ առընթեր գոյություն և կրավորական մասնիկ չէ, որովհետև «Տիեզերքի տերն եմ ես» տողը բարձրում գտնվելու և բարձունքից, այսինքն՝ բյուրեղացված, հոգեփոխված վիճակից իրերն ու երևույթները գնահատելու պատկեր է: Ներքոբերյալ քառյակում ևս «վեհանում է ամենալուր հոգին»՝ մերձենալով տիեզերքի «խոր մեղեդուն ու մրմունջին».

*Ես շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր.*
*Ես լըսում եմ Նըրա անլուռ կանչն ու հունչը ամենուր.*
*Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին*
*Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունջը ամենուր:*

Տիեզերքի այս անհատականացված ընկալմամբ Թումանյանն ընթերցողին համամասնակից է դարձնում բարձրագույն ապրումներին. «Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթ, // Մեծ խոհերի խոյանքների հեռուներում անարատ, // Անհիշելի վերհուշերի մըշուշներում նըրբաղոտ՝ // Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թե կըհասնեմ Նըրա մոտ...»:

Մարդկային գոյության իրական անփոփոխ ակունքն ու առանցքը՝ տիեզերքը, դառնում է կենսահմաստային նույնացման առարկա. «Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ինչ կա որ»: Երկնքի հետ հոգեբանական նույնացման տիպիկ օրինակ է նաև հետևյալ քառյակը. «Իմ հոգին էլ այն երկնքի նման, // Որ ծավալվում է ձեր գլխի վերև, // Ձեզ անհայտ, գաղտնի — տեսնում է շատ բան // Եվ մոտ, և՛ հեռու, և՛ փայլուն, և՛ սև...»:

Թումանյանն ինքը փիլիսոփայական անվանեց իր ստեղծագործական կյանքի վերջին շրջանը: 1923 թ. հունվարի 21-ի զրույցի ժամանակ ասել է. «Իմ վերջին շրջանը՝ փիլիսոփայական շրջանը — «տիեզերական խոհերի» շրջանն է:

Բանաստեղծի՝ տիեզերքի հետ կապն ավելի սերտացավ մահվան մահճում: Դստեր՝ Նվարդ Թումանյանի հուշերում ընթերցում ենք. «Առավոտը խնդրեց մահճակալը էնպես դնենք, որ երկինքը երևա».

*Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ինչ կա որ.*
*Ես եղել եմ, կամ, կլինեմ հար ու հավետ, ինչ կա որ.*
*Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,*
*Ես միշտ հոգի, Տիեզերքի մեծ Հոգու հետ, ինչ կա որ:*

*Թումանյանի բանաստեղծական բանականությունը,* ահավասիկ, շարժման մեջ դրեց տիեզերքը, որպեսզի արարչագործությունը շարունակվի երկրի վրա ու հոսի դեպի մարդկանց ներսը: Տիեզերքի հետ մերձեցումը ոչ այլ ինչ է, եթե ոչ կյանքի մշակութային նախագիծ, որտեղ ոչ միայն շտկվում են անցյալի ու ներկայի սխալները, այլև ուղենշվում տիեզերքի ու Բարձրյալի հետ ներդաշնակվելու ճանապարհները: Թումանյանի քնարական հերոսը դառնում է տիեզերքին ձուլված բարձրակարգ մարդը, որը վերադարձել է իր արարչաստեղծ էությանն ու նախասկզբին: Հենց այսպես է Թումանյանը տիեզերքը դարձնում հոգևոր մշտամնա արժեք:

**Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ, հ. գ. թ., դոցենտ**

# Նորօրյա աղոթքներ

*Ամեն օր Քեզնից հեռանում,*
*Կրկին մոտենում եմ Քեզ, ի՛մ Տեր,*
*Առանց Քեզ չկան կյանք ու սեր,*
*Առանց Քեզ անհաշտ եմ ինձ հետ...*
*Աղոթքս հանձնում եմ Քո կամքին ու սպասում, Տե՛ր...*

* * *

Իմ մենության ընկեր՝ անդավաճան ու հավատարիմ, իմ վստահելի ու հոգատար Հայր, իմ խորհրդատու և նեղ օրերիս միակ վկա, փա՛ռք Քեզ, որ Դու կաս... Դու հոժարակամ կրեցիր ծանր խաչը և Գողգոթա բարձրացար՝ փշե պսակ կրելով և կյանքդ չխնայելով անարժաններիս փրկելու համար: Գեղարդով արյունաքամվեցիր՝ Հորդ պատգամն իրագործելով և ապրեցնելով մեզ հարությանդ հրաշքով: Փա՛ռք ու խոնարհում, երկնայի՛ն Տեր: Ամեն ինչի համար Քեզ եմ պարտական, Քո խոսքը կյանք է, տիեզերական խորհուրդ՝ ճշմարիտ ու անդավ: Մեղա՛, Բարձրյա՛լ, ներիր մեր բազմաբնույթ մեղքերը: Ամեն:

* * *

Երկիրս տառապանքի մեջ է, Տե՛ր, ողորմյա ազգիս, կանչիր նրան՝ մեղքի բեռները ցած դնելու Քո ոտքերի քով և դարձի գալու... Միայն Քո զենքով կարող ենք հաղթել այս աշխարհին: Քո՝ մեզ տված հայրենիքը խլիր անօրեններից և մեր հույսի մոմերը վառիր նորից Քեզ դավանող եկեղեցիներում ու վանքերում: Ուժ ու զորություն տուր մեր զինվորներին և կասեցրու հոխորտացող ոսոխին: Քո հզոր շունչի տակ պահպանիր մեր զինվորներին, մեր սահմանները, մեզ՝ բոլորիս: Թող Քո կենարար լույսն ու օրհնությունը ողողեն աշխարհը, և խաղաղությունդ ծավալվի ամենուրեք: Ամեն:

* * *

Ողորմյա, Տե՛ր, այն անհիրավությունները, որ ի հայտ են եկել մեր ազգի մեջ՝ միմյանց քարկոծելը, ատելը, հպարտանալը, նախանձելը.... Փա՛ռք Քեզ, իմ հույսի և լույսի Աստվա՛ծ, աղերսում եմ՝ ապաշխարանքի հոգի տուր մեր ազգին և արմատախիլ արա չարի արմատները, որ գաղթակղում, այլասերում է ազգս, և Քո իշխանությունը հաստատիր մեծ ու փոքր իմ հայրենիքում: Տո՛ւր մեզ Քո անսպառ սերը, որ կարողանանք նրա շնորհիվ մաքրել մեր հոգուց արատավոր ամեն բռնկում: Ամեն:

* * *

Ամենազորե՛ղ Տեր, գթա ազգիս և արթնացրու խոր թմրությունից: Լսիր մեր աղոթքները և Քո իմաստուն խոսքով արթնացրու բոլոր մոլորվածներին: Դարձի բեր ուրացողներին և հետ պահիր սխալ որոշումներից: Իմաստնություն տուր իշխանավորներին, արդար դատաստանդ թող սթափեցնի և ուղիղ ճանապարհի բերի նրանց: Բաց բոլոր փակ ճանապարհները, փշրիր բոլոր պատնեշները մահաբեր, փրկիր քրիստոնյա ազգիս: Ամեն:

* * *

Ամենաշնորհ Աստված, Քո լուսավոր հոգուց մի շող ճառագիր իմ սրտում և մտքում և հիշողությունս կազդուրիր, որ ես Քո իմաստնության գրքից կարդացածս յուրացնեմ և փոխանցեմ ծարավածներին: Բարեհոգի՛ Աստված, ամեն առաջընթացի, ամեն հաջողության, բարի մտքի համար Քեզ եմ պարտական: Վանիր մեզնից այս անտարբերությունը, ծուլությունը, անորոշությունը և չարի գործերը խափանիր... Ամեն պահ, ամեն ժամ Դու ինձ հետ ես, սիրելի՛ իմ Տեր՝ վիճատությունս ցրող, հույսս նորոգող, հավատս ամրացնող և սիրտս մաքրող: Զարմանալի ուժ և զորություն եմ ստանում Քեզնից, Տե՛ր, որ կարողանում եմ այսքան դիմակայել: Երանի մի օր արդարների հետ մերձենամ Քեզ և խոնարհությամբ աջդ համբուրեմ: Ամեն:

**Զոյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

## *Իններորդ երանութեան մասին, որ Քրիստոս յատուկ կերպով Սուրբ առաքեալներուն տուաւ*

*Սկիզբը՝ թիւ 9–18, 20*

Տասներորդ հարցում:

Քրիստոսի՝ Իր սուրբ առաքեալներուն տուած երանութիւնը գերազանց եւ բազմավարձ է, քանի որ Քրիստոս բոլոր երանութիւնները ի վերջոյ Իր սուրբ առաքեալներուն տուաւ:

Աստղաբաշխներն ու կանխագուշակները կ՚ըսեն, թէ թէեւ լուսինը միւս բոլոր աստղերէն փոքր ու ցած է, սակայն բոլոր աստղերուն ու մոլորակներուն յատկութիւնները ինքն իր վրայ կը հաւաքէ: Այսպէս ալ Տէրը՝ Քրիստոս, բոլոր երանութիւններուն ներգործութիւնն ու զօրութիւնը վերջաւորութեան սուրբ առաքեալներուն վրայ դրաւ, քանի որ անոնք Եկեղեցւոյ հիմքն էին: Տան մը հիմքերն ու սիւները պէտք է ամբողջ շինուածքէն աւելի հաստատ ու կայուն ըլլան. հետեւաբար սուրբ առաքեալները հիմք եղան եւ ենթակայ բոլոր երանութիւններուն: Այդ պատճառով Քրիստոս ըսաւ, թէ ձեր վարձքը շատ պիտի ըլլայ երկինքի մէջ:

Իսկ առաքեալներուն առաջին վարձքը հոգիի աղքատութիւնն էր, որ զուրկ ու դատարկ էին մեղքերէ:

Երկրորդ վարձքը սգաւորութիւնն էր, որ միշտ կը սգային չզղջացող մեղաւորներուն վրայ, ինչպէս կ՚ըսէր Սուրբ Պօղոս, թէ տրտմութիւն եւ մնայուն ցաւ կայ սիրտիս մէջ չապաշխարող մեղաւորներուն համար, եւ թէ՝ լալով կը խօսիմ Յիսուսի խաչի թշնամիներուն մասին, որոնց աստուածը իրենց որովայնն է:

Երրորդ վարձքը հեզութեան երանութիւնն է, որ բոլորը իբրեւ անմեղ գառնուկ հեզութեամբ մարմնաւոր դատաւորներու դիմաց կ՚ելլէին, ինչպէս նաեւ հեզութեամբ բոլորը կը խրատէին: Այդ պատճառով մարդկային բնութեան երկիրը ժառանգեցին Քրիստոսի հաւատքով եւ երկրի թագաւորները՝ աշխարհի իշխանները եղան:

Չորրորդ վարձքն արդարութեան քաղցն էր, որ այնքան անօթի ու ծարաւի էին արդարութեան, որ մինչեւ մահ արդարութեան համար պատերազմեցան, որովհետեւ դատաւորներ ու Քրիստոսի աթոռակիցներ էին: Խիստ անհրաժեշտ էր անոնց համար արդարութեան առաքինութիւնը, որպէսզի արդարութեամբ հաստատուի Թագաւորին աթոռը, ինչպէս Սողոմոնը կ՚ըսէր: Իսկ սուրբ առաքեալներն իրենց արդարութեամբ Քրիստոսի Թագաւորութեան աթոռը հաստատեցին:

Հինգերորդ վարձքը ողորմութեան երանութիւնն էր, որ փոյթ չդարձնելով իրենց աղքատութեան՝ որբերուն ու այրիներուն համար ողորմութիւն կը հաւաքէին, քանի որ իբրեւ հայր գթած էին եւ իբրեւ մայր՝ ողորմած: Տակաւին, եթէ հոգեւոր ողորմութեամբ զարդարուն էին, որովհետեւ մեղաւորներուն թողութիւն կու տային, մեղուցեալները կը յանդիմանէին, տգէտները կ՚ուսուցանէին, երկմիտները կը խրատէին, տրտմածները կը մխիթարէին, մարդոց փրկութեան համար կ՚աղօթէին եւ կը համբերէին մարդոց՝ իրենց հանդէպ կատարած անիրաւութիւններուն:

Վեցերորդ վարձքը սիրտի սրբութեան երանութիւնն էր, քանի որ նախանձ չունէին, ինչպէս մանուկները: Խորհուրդով մաքուր էին, ինչպէս հրեշտակները: Ողջախոհ էին, ինչպէս տատրակները, միամիտներ, ինչպէս աղաւնիները, այդ պատճառով ալ Աստուծոյ տեսութեան արժանացան:

Եօթներորդ վարձքը խաղաղասիրութեան երանութիւնն էր, որով Աստուծոյ որդիներ կոչուեցան, քանի որ Աստուծոյ, իրենց հոգիին ու մարմինին հետ խաղաղ էին, ինչպէս նաեւ՝ բոլոր մարդոց: Սուրբ Պօղոս կը խրատէր հաւատացեալները, թէ՝ եթէ հնարաւոր է, բոլոր մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք:

Ութերորդ վարձքն արդարութեան համար հալածուիլն էր, որով Երկինքի Արքայութեան արժանացան:

Քրիստոս վերջին երանութեան մէջ բոլոր երանեալներուն վարձքերը սուրբ առաքեալներուն վրայ հաւաքեց ու այդ պատճառով ըսաւ, թէ ձեր վարձքը շատ պիտի ըլլայ Երկինքի մէջ: Ս. Յակոբոս առաքեալը կ՚ըսէ, եթէ մէկը ոեւէ մէկ մեղաւորի մոլորութեան ճանապարհէն դարձնէ, ինքն իր անձը մահէն կը փրկէ ու իր մեղքերուն շատութիւնը կը ծածկէ: Իսկ եթէ մէկը ոեւէ մեղաւոր մը դարձի բերէ, իր հոգին կը փրկէ, ու իր մեղքը չի յիշուիր:

Հետեւաբար առաքեալները, որոնք անթիւ ու անհամար մարդիկ անհաւատութենէ ու մեղքերէ դարձի բերին, այդ պատճառով բոլորին փոխարէն Աստուծմէ վարձք ստացան: Իմացի՛ր, ուրեմն, թէ ինչքա՜ն փառքով ճոխացան:

Տասներկու սուրբ առաքեալները, տասներկու պատուական ակեր են, մարդոցմէ փառաւորուած եւ Աստուծմէ պսակով զարդարուած:

## *Ս. Հոգիի տասներկու պտուղներու մասին, որ Ս. Պօղոս առաքեալը կը թուէ գաղատացիներուն ուղղած իր նամակին մէջ (Ե 22–23)*

Առաջին հարցում: Ինչպէս պտուղը ծաղիկներուն ու ծառերուն լրումն է, այդպէս ալ Ս. Հոգիին պտուղները Քրիստոսի մարդեղութեան ծաղիկներուն կատարելութիւններն են: Քանի որ ինչպէս Քրիստոսի չարչարանքներուն պտուղները Ս. Եկեղեցւոյ եօթ խորհուրդներն են, նոյնպէս Ս. Հոգիին բարերարութիւններուն պտուղները տասներկուքն են: Տակաւին, ինչպէս ծառը իր պտուղէն կը ճանչցուի, նոյնպէս քրիստոնեան, եթէ այդ տասներկու պտուղները ունենայ, ատոնցմով կը ճանչցուի իր քրիստոնեայ ըլլալը:

Երկրորդ հարցում. այն մասին, թէ որոնք են Ս. Հոգիին պտուղները:

Պատասխան. առաջինը սէրն է:

Երկրորդը՝ խնդութիւնը:

Երրորդը՝ խաղաղութիւնը:

Չորրորդը՝ երկայնամտութիւնը:

Հինգերորդը՝ քաղցրութիւնը:

Վեցերորդը՝ բարութիւնը:

Եօթներորդը՝ հաւատքը:

Ութերորդը՝ հանդարտութիւնը:

Իններորդը՝ հեզութիւնը:

Տասներորդը՝ ժուժկալութիւնը:

Տասնմէկերորդը՝ զսպումը:

Տասներկրորդը՝ ողջախոհութիւնը:

Արդարեւ, սէրը օրէնքներու լրումն է, եւ Ս. Հոգին է, որ մեզ կը յորդորէ զԱստուած սիրել: Սիրտի սէրէն յայտնի կ՚ըլլայ, եթէ մարդուն գործերը բարի են կամ չար, ինչպէս ծառը՝ իր պտուղէն:

Խնդութիւնը այն է, որ մարդ բարիք գործելէն կը ցնծայ եւ կ՚ուրախանայ, ինչպէս մայր մը իր նորածին զաւակին կ՚ընէ: Այս խնդութիւնը Ս. Հոգիին միջոցով կը ներգործէ մեր սիրտին մէջ:

Խաղաղութիւնը միտքի հանգստութիւնն է: Մարդ, երբ առաքինութիւն կը գործէ, միտքը կը խաղաղի, որ մինչ այդ խռովութիւն ունէր իր մարմինին հետ եւ կը հակառակէր հոգիին: Այս խաղաղութիւնը Ս. Հոգիին միջոցով կը ներգործէ մեր մէջ: Ս. Հոգին խաղաղութիւն կը կոչուի:

Երկայնամտութիւնը համբերելն է բարեգործութեան վարձատրութեան ուշացումին: Ս. Հոգին կը խրատէ մեզ երկայնամիտ ըլլալ ու բարի գործերու վարձքերուն համար համբերել, ինչպէս նաեւ նեղութեան մէջ իյնալուն՝ անմիջապէս մխիթարութիւն չխնդրել, այլ համբերել ու Աստուծոյ կամքին յանձնել [այդ նեղութիւնը], որ մեզի վարձք տալուն մէջ հաւատարիմ է: Այդ պատճառով Ս. Յակոբ կ՚ըսէ, թէ՝ երկայնամիտ եղէք մինչեւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի գալուստը: Որովհետեւ մշակն ալ սերմը ցանելուն պէս անմիջապէս չի՛ քաղեր, այլ մինչեւ հունձքին ժամանակը կը համբերէ: Նոյնպէս Ս. Հոգին կը խրատէ մեզ, թէ երբ բարեգործութիւն սերմանէք, մի՛ շտապէք քաղելու մասին մտածել, այլ երկայնամիտ եղէք մինչեւ Քրիստոսի գալուստը:

Քաղցրութիւնը այն է, որ Ս. Հոգին մեզ առաքինութեան եւ Աստուծոյ սիրով կը քաղցրացնէ, որով բոլոր դժուարութիւնները յօժարութեամբ կը տանինք, եւ նեղութիւնը կը քաղցրանայ մեզի համար:

Բարութիւնը այն է, որով մարդ իր Նախատիպին՝ Աստուծոյ կը նմանի, որովհետեւ Աստուած բարի է: Մարդը, բարի Աստուածը սիրելով, իր չափ ու սահմանին համեմատ կը բարիանայ: Բարին սիրելը Ս. Հոգին կը յորդորէ մեզի:

Հաւատքը հոգիին լոյսն է, որով մարդ անտեսանելի բաներուն կը հաւատայ եւ զԱստուած խոստովանողին համար [Անոր գոյութիւնը] հաւաստի կ՚ըլլայ. ասիկա Ս. Հոգին կը սորվեցնէ մեզի:

Հանդարտութիւնը այն է, որ մարդուն չի՛ ձգեր, որ բարիք գործելուն մէջ շտապէ, քանի որ հանդարտ ըսելը դանդաղ, կամաց ըսել է: Իսկ ան, որ շտապէ գործ մը ըրած ժամանակ, իրար կ՚անցնի: Մանաւանդ բարիք գործելու պարագային մարդ պէտք է հանդարտութեամբ գործէ եւ ո՛չ թէ անզգամութեամբ ու լրբութեամբ:

Հեզութիւնը բնութենէն մարդուն տրուած առաքինութիւն մըն է: Ս. Հոգիին պտուղները զանազան են. քանի որ բնութեան գործը մարդուն չի՛ վարձատրեր մինչեւ Ս. Հոգիին շնորհներէն չունենայ, այդ պատճառով հեզութիւնը Ս. Հոգիի պտուղ կ՚ըսուի, որ մարդուն փառքի կը հասցնէ:

Ժուժկալութիւնը այն է, որ մարդ բոլոր նեղութիւններուն բարեգործութեան համար կը համբերէ:

Զսպումը այն է, որ մարդ մարմինին կամքը հոգիին կամքով կը նուաճէ, ինչպէս նաեւ ծոմով ու պահեցողութեամբ չկառավարուող մարմինը կը կառավարէ:

Ողջախոհութիւնը այն է՝ կարենալ աշխարհի սէրէն, մարմինի հեշտութենէն եւ սատանայի կամքէն ողջ ու կատարեալ պահել բոլոր զգայութիւնները:

Եթէ Ս. Հոգիին տասներկու պտուղներով զարդարուիս, Աստուծոյ եւ մարդոց համար պատուական կը համարուիս:

*Շարունակելի*

**Յակոբ պատրիարք ՆԱԼԵԱՆ**
**ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ (1806)**

**Փոխադրութիւնը՝ Վարանդ (Յակոբ)**
**ՔՈՐԹՄՈՍԵԱՆԻ**

# *Ականդազրույցներ Տաթևի վանքի շուրջ*

Տաթևի վանքից Հալիձոր տանող ճանապարհին կանգնեցված հսկա քարը կոչվում է «Հայրիկի քար»: Հալիձորցիները պատմում են, որ Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը (Մկրտիչ Ա Վանեցի, 1892–1907 թթ.) Տաթևից Հալիձոր գնալիս նստել է այդ վայրում, հանգստացել, հիացել շրջակայքի աննկարագրելի գեղեցկությամբ, ապա շարունակել ճանապարհը: Հետագայում, ի հիշատակ Հայոց Հայրիկի, զանգեզուրցիները նույն այդ վայրում մի մեծ քար են կանգնեցրել ու այդպիսով հավերժացրել սիրելի կաթողիկոսի նկատմամբ ունեցած իրենց սերն ու ակնածանքը:

Տաթևի վանքի վերաբերյալ մի ուշագրավ ավանդազրույց է մեզ հասել, որում ստուգաբանվում է նաև Տաթև անունը: Ասում են, թե Տաթևի վանքը կառուցող վարպետը, որը նաև ճարտարապետն էր, ավարտելով իր գործը, հասնում է վանքի սլացիկ գմբեթի գագաթին: Հանկարծ նա վերևից ցած է նայում և տեսնում անդնդախոր ձորի սարսափազդու խորությունը: Վարպետը փշաքաղվում է, սարսուռ է անցնում մարմնով, հնձված հասկի պես փլվում է գմբեթին, ամբողջ մարմինն սկսում է ցնցվել: «Ո՞նց եմ իջնելու այստեղից»,– մրմնջում է վարպետը: Ակամայից ձեռքը սահեցնում է ճակատը պատած սառը քրտինքի կաթիլների վրայով, ապա սրբում գոգնոցի փոշոտ ծալքերում: Մի կերպ հավաքելով վերջին ուժերը՝ թախանձագին դիմում է Աստծուն. «Հոգին Սուրբ թող ինձ տա թև»: Անսալով ալեզարդ վարպետի աղաչանքին՝ Աստված թևեր է պարգևում նրան, որոնցով նա կտրում-անցնում է ձորը, թռչում հեռու-հեռու, հասնում հեռավոր մի երկիր: Վարպետի անհայտանալուց հետո նրա քարգործ ընկերներն սկսում են մտահոգվել, թե ինչպես պետք է հանեն այն գերանակապ հենարանները, որոնք իրենց վրա պահում էին վանքի սալածածկ տանիքը: Ոչ ոք չի համարձակվում ստանձնել այդ գործը: Ստիպված որոշում են գտնել վարպետին: Երկար դեգերումներից հետո՝ ի վերջո, մի հեռավոր, մեկուսի վայրում հաջողվում է գտնել վարպետին: Ընկերների աղերսալից խնդրանքներին վարպետն անհաղորդ է մնում: Ոչ մի կերպ չեն կարողանում համոզել անդրդվելի վարպետին: Լավ է, որ նա գոնե համաձայնում ու ասում է գերանակապ հենարանները հանելու եղանակը: Վարպետի ընկերները գլխիկոր վերադառնում են Սյունիք, քանդում են հենարանները և վանքի անունը դնում Տաթև՝ ի հիշատակ այն սրտաբուխ աղաչանքի, որով քարգործ վարպետը դիմել էր Աստծուն. «Հոգին Սուրբ թող ինձ տա թև, տա թև»: Այդպես էլ այդուհետ, քարգործ վարպետին Աստծո պարգևած փրկարար թևերը հիշելով, բարեպաշտ մարդիկ վանկարկում են՝ «....տա թև, տա թև...», ու վանքը կոչվում է Տաթև:

* * *

Պատմում են, որ Տաթևի վանքը կառուցելուց հետո զանգակատանը ոչ թե երկու մեծ զանգ են կախել, ինչպես որ հետագայում է եղել, այլ կախել են մի մեծ, հսկայական ու ձայնեղ զանգ: Նրա ձայնն այնքան ուժեղ, զիլ ու ղողանջուն էր, որ երբ չորս վանականները ձգում էին լեզվակից կապված հաստ ճոպանը և հնչեցնում զանգը, հսկայական զանգի ղողանջները տարածվում էին հեռուներում, արձագանքը թնդացնում էր սար ու ձոր: Ժողովուրդն ասում էր. «Էս ի՞նչ զորեղ ու զորավոր, էս ի՞նչ զոռ զանգ է... զանգը զո՛ռ է, զանգը զո՛ռ է, զանգը զո՛ռ...»: Այդպես առաջանում է Սյունիք աշխարհի սիրտը կազմող տարածաշրջանի Զանգեզուր անվանումը: Երբ կարևոր հարցեր լուծելու համար ժողովրդական կամ եկեղեցական ժողով հրավիրելու անհրաժեշտություն կամ արյունարբու ոսոխների և ավարառու հրոսակների հարձակման վտանգ է եղել, հնչեցրել են այդ զանգը, նա ահազանգ է գուժել, այդպիսով սթափեցրել, զգուշացրել և Տաթևի վանք հրավիրել հարակից բոլոր գյուղերի, ամբողջ գավառի ու հարևան գավառների զորականներին ու աշխարհազորայիններին: Տաթևի զանգի հնչեցրած տագնապի կանչով շրջակա գյուղերի և գավառների եկեղեցիների զանգերը ևս միացել են նրա ահազանգող

*«Հայրիկի քար»*

ղողանջներին, Ծղուկ և հարակից Հաբանդ, Զորք, Բաղք և Երնջակ գավառների բնակիչները ոտքի են կանգնել, հերոսաբար մարտնչել թշնամու դեմ, ջախջախել և դուրս շպրտել Զանգեզուրի տարածքից:

➥ էջ 8

# Ավանդազրույցներ Տաթևի վանքի շուրջ

➥ էջ 7

Այսպես երկար տարիներ Զանգեզուրը մնաց անառիկ, բարգավաճեց ու շենացավ: Անցան տարիներ: Լուրեր հասան, թե Միջին Ասիայից, Խորեզմի թագավորությունը նվաճելուց հետո, Պարսկաստան է արշավում Լենկ Թեմուրը: Լուրերը հաստատվեցին, երբ Լենկ Թեմուրն արդեն հարավից սպառնում էր մտնել Հայաստան: Բռնակալ Լենկ Թեմուրն արդեն եկել-հասել էր Արաքսի ափին, զորքին հանգիստ էր տվել, որպեսզի շուտով սրընթաց գետանցում աներ: Դեռ գետը չանցած՝ նրան է ներկայանում Մեհրի անունով մի իշխան և ասում. «Լենկ Թեմուրն ապրած կենա, եկել եմ, որ քեզ ծառայեմ»: Թեմուրի այն հարցին, թե ինչո՞վ նա կարող է ծառայել իրեն, իշխանը պատասխանում է. «Քանի Տաթևի վանքի մեծ զանգը կա, դու չես կարող գրավել այս լեռնաստանը, քանզի թշնամական զորքեր տեսնելուն պես կամ արհավիրքի ու սպառնալիքի դեպքում հնչեցնում են այդ փրկաբեր զանգը, նրա ահազանգով ժողովրդին հանում արհավիրքին ընդառաջ»: Կարկամում է Լենկ Թեմուրը, խոժոռվում և մի քիչ մտածելուց հետո ասում. «Գնա՛, վառի՛ր, փչացրու՛ էդ զանգը, ես քեզ շատ ոսկի, ադամանդ, հողեր ու իշխանությո՛ւն կտամ»: Ստոր դավաճանը ագահ, ցնծությունից պսպղացող աչքերով հեռանում է, գնում, գտնում է շուտափույթ հարստանալու մոլուցքով վառվող իր նման մի քանի ուրիշ դավաճանների, և գիշերով զանգի տակ մի մեծ խարույկ են վառում և հալեցնում-կտրում փրկաբեր զանգի լեզվակը: Լենկ Թեմուրի զորքը սրընթաց անցնում է Արաքսը: Սուրհանդակները գույժը հասցնում են Տաթևի վանահորը: Ճերմակամորուս վանահայրը կանչում է ժամհար վանականներին ու կարգադրում անմիջապես հնչեցնել զանգը: Ժամկոչ վանականները, մոտենալով զանգին, տեսնում են արդեն մարող խարույկը, փորձում են գտնել լեզվակից կախված ճոպանը և հնչեցնել զանգը: Բայց՝ ի զո՞ւր... Փրկաբեր զանգը համրացել էր... Ժամհար վանականները սուրում են վանահոր մոտ և գուժում. «Ամեն բան զո՞ւր է, սրբազա՛ն հայր, զանգը համրացել է, էլ չի ղողանջում...»: Լենկ Թեմուրը հասնում է Տաթև,



*Տաթևի վանքի զանգակատունը մինչև 1931 թ. երկրաշարժից ավերվելը*

ապա գրավում է ամբողջ Սյունյաց երկիրը՝ ավեր, արյուն, կոտորած, մահ ու թալան սփռելով ամենուր: Ողջ մնացած մարդիկ զարմանքով հարցնում էին միմյանց. «Ո՞ւր էր զանգը զոռ, ինչո՞ւ էր նա լուռ, ինչո՞ւ ահազանգ չտվեց նա մեզ, ինչո՞ւ չկանչեց նա մեզ ռազմի դաշտ... ինչո՞ւ, ա՜խ, ինչո՞ւ...»: Ոմանք էլ, գլխահակ ու արտասվալից հայացքները հառած անորոշ կետի, այսպիսի տխուր պատասխան տվեցին . «Զանգը զո՞ւր է, մեր զոռ զանգը զո՞ւր է... ա՜խ, իզո՞ւր է, զանգը զո՞ւր է, զանգը զո՞ւր, զանգը զո՞ւր...»: Դրանից հետո Սյունիք նահանգի սրտի՝ լեռնաշատ այս բնաշխարհի անունը կնքվեց ու մնաց Զանգեզուր:

* * *

Տաթևի վանքի հետ կապված ևս մի հետաքրքիր ավանդազրույց էլ է պահպանվել: Այնպես է պատահում, որ Տաթևի վանքը կառուցող քարգործ վարպետն ու վանական համալիրի համար ջրատար առու փորող վանականը գրազ են գալիս, թե իրենցից ո՞վ ավելի շուտ կավարտի աշխատանքը: Դրանից հետո նրանք սկսում են ավելի եռանդով աշխատել: Ժամանակ է անցնում, վանականը տեսնում է, որ քարգործ վարպետը տանիքի քարե սալերն ամրացնելուց հետո հասել է գմբեթին, մինչդեռ ինքը դեռևս չի էլ մոտեցել աղբյուրի ակունքին: Վանականը երկար ժամանակ մտմտում է, թե ինչ անի, ինչպես անի, որ քարգործ վարպետից ավելի շուտ «վերջացնի» գործը և գրազը տանի: Վերջապես վանականը համոզվում է, որ միայն խորամանկությամբ կամ խաբելով կարող է գործը գլուխ բերել: Վանականը վանքի դիմացի զառիթափին կախում է մի մեծ ճերմակ սավան, որը քամուց ալիքաձև ծածանվելով՝ նմանվում էր քարափի գլխից գահավիժող աղբյուրի: Վանքի գմբեթի վերջին քարերը շարող վարպետի հայացքն ակամա ընկնում է հանդիպակաց ձորալանջին, և նա մի պահ հապաղում է, ձեռքին բռնած քարը գլորվում է գմբեթն ի վար, վարպետը հազիվ փարվում է գմբեթին ու սահելով իջնում վանքի տանիքին: Վարպետին թվում է, թե վանականը քարափից թափվող աղբյուրի ջրերը ուր որ է կհասցնի վանք, ու ինքը գրազը տանուլ կտա: Չհաշտվելով պարտված լինելու և մնացած ողջ կյանքում գլխիկոր քայլելու մտքի հետ՝ պատվախնդիր ու համեստ վարպետը վանքի տանիքից իրեն նետում է խորախորունկ ձորը.... Տեղացիները մինչև այսօր էլ ցույց են տալիս նրա գերեզմանը: Խարդախ ու վատանուն կրոնավորի անունով Տաթևի վանքի առուն հետագայում ստացավ Քեշիշ արխ (Քահանայի առու) անունը:

* * *

Տաթևի վանքից մոտ 5 կմ հարավ՝ Որոտան գետի ափին է գտնվում մի բնական հուշարձան: Ավանդաբար պատմում են, թե դա գեղանի Շահանդուխտի պատվին է առաջացել: Վաղուց, շատ վաղուց Շահանդուխտ անունով մի աղջկա հարս տանելիս հարսանքավորների թափորը Սյունյաց լեռներում ենթարկվել է անօրենների հարձակմանը: Ավազակները, որոնք լսել էին հարսնացուի անզուգական գեղեցկության համբավը, կամեցել են հափշտակել շարմաղ Շահանդուխտին: Մինչ հարսանքավոր տղամարդիկ մենամարտում էին ավազակների դեմ, Շահանդուխտը փորձում է փախչել-հեռանալ: Սակայն ավազակները նկատում են սուրացող հեծյալին և սլանում են նրա հետևից: Ելուզակ առևանգիչների ձեռքը չընկնելու համար Շահանդուխտը

*«Շահանդուխտի քար»*

ձիով թռել է բարձր ժայռի գագաթից և անվնաս իջել Որոտան գետի ափին: Դրանից հետո այդ ժայռը կոչվել է Շահանդուխտի քերծ:

* * *

Հայոց Արևելից կողմանց (Արցախ-Ուտիք աշխարհներ) գահերեց իշխան Վարազ Տրդատի դուստր Շահանդուխտի մասին պահպանվել է մի գեղեցիկ պատմություն: Շահանդուխտին հարս էին խնդրել Թորգոմյան տնից: Երբ նա անցնում էր Բաղաց աշխարհով, առևանգման նպատակով նրա վրա են հարձակվում արաբ զինվորները: Կռահելով նրանց նպատակը՝ Շահանդուխտը մտրակել է ձիուն ու թռել քարաժայռի փլվածքը: Այժմ Գորիսից Տաթև տանող ճանապարհին՝ Հալիձորի անտառի դիմաց, բարձր գահավեժ քարափներից մեկը կոչվում է Հարսնաքար կամ Հարսնաքերծ: Ղ. Ալիշանն այն անվանում է Հարսնավազն:

* * *

Հրաշագեղ Տաթևի ձորում՝ Սատանի կամրջի մոտ է գտնվում նշանավոր Հարսնաքարը: Ասում են, թե իբր շահ Աբասը գալիս է Տաթև ու մարդ է ուղարկում, որ գնան ու Տաթևի Մեծ անապատից մի գեղանի կույս բերեն իրեն: Շահի համար ընտրված կույսը ճանապարհի ոլորանին, որից հետո այլևս չէր երևալու Տաթևի Մեծ անապատը, խնդրում է, որ իրեն թույլ տան վերջին անգամ տեսնել մենաստանը և աղոթել: Երբ շահի զինվորները համաձայնում են կատարել չքնաղագեղ օրիորդի աղաչանքը ու նրան մենակ թողնելով՝ մի փոքր հեռանում են, միանձնուհին հայացքը դարձնում է դեպի մենաստանը, երկու ձեռքերն իրար միացրած ծնկի է գալիս ու արտասվալից աղոթք մրմնջում: Վերջացնելուց հետո ոտքի է ելնում, ասեղնագործ թաշկինակը հպում աչքերին, գրպանից հանում փոքրիկ մասնատուփը, բացում, հանում մի կտոր մաս ու տանում բերանը, ապա խաչակնքվում է, փակում աչքերն ու շվարած զինվորների աչքի առաջ իրեն նետում է ձորը... Գետնին ընկած միանձնուհին տեղն ու տեղը քար է դառնում: Ասում են, թե ամեն տարի՝ նույն օրը, ձորից մի ծվոց է լսվում...

**Արման ՄԱԼՈՅԱՆ**
**Պատմական գիտ. թեկածու**

*Վատուածաշունչ՝ զիրք գրոց*

Երուսաղէմը յորդորում եւ մխիթարում է իր կաւակներին

Ով ձեզ վրայ չարիք բերեց, նա էլ կը փրկի ձեզ ձեր թշնամիների ձեռքից...

Բարուք, 18

# Անտարբերությունը մեղք է

➥ էջ 3

Անտարբերության մեղսավոր ախտը մարդկության աչքերը փակել է, աշխարհը կառավարող ուժերը գերադասում են սեփական շահը: Հիսուս այս ամենի մասին ասում է. «Անդադար կնայեն, բայց չեն տեսնի, շարունակ կլսեն, բայց չեն հասկանա, որպեսզի չլինի թե Աստծուն դառնան, և Աստված էլ նրանց իրենց» (Մարկ. Դ 12):

Հոգևոր անտարբերությունը մարդուն զրկում է փրկության հնարավորությունից, այդ պատճառով սրբերը ջանասիրությամբ խնամարկում են իրենց հոգին՝ փորձելով հասնել կատարելության: «Հարանց վարք»-ում կարդում ենք, որ Միրոգեն անունով մի ծեր այնպիսի խստակյաց կյանքով էր ապրում, որ հիվանդացավ ջրգողությամբ: Երբ ծերերը գալիս են նրան բժշկելու, նա բոլորին ասում է. «Հայրե՛ր, աղոթեցե՛ք ինձ համար, որպեսզի իմ ներքին մարդը նման հիվանդության չենթարկվի, իսկ ինչ մնում է ներկայիս հիվանդությանը, ես Աստծուն խնդրում եմ, որ միանգամից ինձ չազատի դրանից»: Այս սուրբը փաստում է, որ առավել ծանր է, երբ մարդ ունի ներքին, հոգևոր հիվանդություն, լավ է մարդ մարմնապես հիվանդ լինի, քան հոգեպես: Մարմնական ցավի համար կան բազմաթիվ դեղորայքներ, իսկ հոգու հիվանդության միակ դեղը Տիրոջ խոսքն է: Մարդիկ չեն գիտակցում, որ ինչպես մարմինը, նույնպես և հոգին կարող է հիվանդանալ: Ամերիկացի գրող, հասարակական գործիչ, ուսուցչուհի Հելեն Քելլերը, որը կույր և խուլ է եղել, ասել է. «Գիտությունը բազմաթիվ հիվանդությունների դեմ բազմաթիվ դեղորայք է հայտնագործել, բայց չի գտել միջոց հիվանդություններից ամենասարսափելիի՝ անտարբերության դեմ»:

Անտարբեր մարդուն հատուկ արտահայտություններ են՝ «ինձ չի վերաբերում», «ես գործ չունեմ» և այլն: Անտարբերությունը չարիք է, որը բթացնում է մարդկային հատկությունները: Այն ընդունակ է անգամ անհատին զրկելու ծնողական զգացմունքից, այսինքն՝ ծնողը թողնում է իր երեխային, կամ հակառակը՝ երեխան է անզգա դառնում ծնողի հանդեպ: Այս մեղքի պատճառով է, որ գոյություն ունեն որբանոցները և ծերանոցները:

Անտարբերությունը մեծագույն մեղք է, նույնիսկ կարող ենք ասել՝ մեղքերի մայրն է, որից պիտի ազատագրվենք, որ հասնենք փրկության: Մենք չպետք է լինենք անտարբեր քրիստոնյա, որը բացի մոմ վառելուց՝ ոչինչ չգիտի քրիստոնյայի վարքի մասին: Տեր Հիսուս մեզ համար օրինակ եղավ՝ անտարբեր չլինելով մարդկության նկատմամբ: Նա խաչվեց և Իր արյունը թափեց մարդկության մեղքերի համար, որպեսզի կորստյան չմատնվենք ու հնարավորություն ունենանք փրկության արժանանանալու:

Անտարբերության չարիքից կարող ենք ազատվել զղջումով և ապաշխարությամբ: Եթե մարդ մեղանչի և զղջա իրապես, խոստովանի իր մեղքը, պատժի չի արժանանա: Աստված մարդկանց շարունակ հրավիրում է դեպի ճշմարտության գիտությունը՝ կարգելով նաև Ապաշխարության խորհուրդը, որը հնարավորություն կտա ներվելու: Աստվածաշնչում ասվում է. «Անօրենը եթե հետ կանգնի իր գործած անօրինություններից ու պահի Իմ բոլոր պատվիրանները, արդարություն գործի ու ողորմածություն անի, ապրելով ապրելու է ու չի մեռնելու» (Եզեկ. ԺԸ 21):

**Գոհար ՂԱԶԱՐՅԱՆ**

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Նարինե Հովհաննիսյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հեռախոս՝ (010) 517 280**
**Էլ. փոստ՝**
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
**web կայք՝**
**krishayas.wordpress.com**
**etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan**
Ստորագրվ. 27.06.2024 թ.
**Տպաքանակը՝ 1265**